ԱՂԲԻՒՐ

ՄԻԱՄԵՆԱՅՆ ՊԱՏԿԵՐԱՋԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ

ԵՒ

ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՒԲԵՒԱՐՊ ՏԱՐԻ

№ 12

ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԹԻՓԼԻՍ
ՏՊԱՐԱՆ „ԱՐՕՐ“ Տ. ՆԱԶԱՐՆԱՆԻ
Գօղովկինի եւ Բարեւտինսկի փողոցների անկիւնում.
1890

Գարեգին եպիսկոպոս
Ստեփանոսեան

* * *

Երբ ալեկոծ ծովի վրայ
Իմ մակոյկը խորտակուի՝
Ես փրփրադէզ ալեաց միջին
Դեռ իմ յոյսը չեմ կտրի։—

Բոլոր ուժով եւ համարձակ
Բազուկներս կը շարժեմ,
Ալիքները պատառելով
Դէպի ափը կը թռչեմ։

—

Անհատնում այդ կռիւի մէջ
Թէ ոյժերս ինձ լքուին,
Ալիքները յորձանք տալով
Թէ ղէպ անդունդ ինձ նետուին՝

Այն ժամանակ զէթ սիրտիանք
Ես կը զգամ՝ նըրա մէջ,
Որ մեռնում՝ եմ քաջի նման
Կռիւ տալով մինչեւ վերջ։

Ք. Թադեոսեանց



ՄՈՒՐԱՑԿԱՆ

(ՏՈՒՐԳԵՆԵՒԻՑ)

Ես անցեալ էի փողոցով. ինձ կանգնացրեց մուրացկանը, մի ուժասպառ ծերուկ:

Բորբոքած, արտասուալի աչքեր, կապտած շրթունքներ, պզպզած ցնցոտիներ, անմսխուր վերքեր . . . Ո՜հ, այդ աղքատութիւնը ինչքան անճառելի կերպով է կրծոտել այս անբախտ էակին:

Նա դէպի ինձ էր մեկնել կարմրած, ուռած, կեղտոտ ձեռքը... Նա հեծում էր, նա օգնութիւն էր աղերսում:

Ես սկսեցի որոնել բոլոր գրպաններս... Ոչ բսակս էր մնաս, ոչ ժամացոյցս, ոչ թաշկինակս անգամ... Ես ինձ հետ ոչինչ չէի վերցրել:

Իսկ մուրացկանն սպասում էր ... և նրա մեկնած ձեռքը թոյլ կերպով ցնցւում էր, դողում:

Ինքս ինձ կորցրած, շփոթւած, ես պինդ սեղմեցի այդ կեղտոտ, դողդոջուն ձեռքը...

—Մի նեղանար, եղբայր, մնաս բան չկայ եղբայր:

Մուրացկանը ինձ վրայ դարձրեց իր բորբոքւած աչքերը. նրա կապոյտ շրթունքները ծիծաղեցին—և նա փոխադարձաբար սեղմեց իմ սառած մատները:

—Ինչ անենք, եղբայր,—արտասանեց նա.—այդքանի համար էլ չնորհակալութիւն: Այդ էլ ողորմութիւն է, եղբայր:

Ես հասկացայ, որ ինքս էլ ողորմութիւն ստացայ իմ եղբօրից:

Ղ.Օ

ԿԱՏՈՒՆ

Երբէք ինչպէս է արեւում՝ քնած,
Կիսով չափ իր արտեւանունը
փակած.
Որքան գոհ է նա այս խաղաղ քնից,—
Թնդթնդացած աշխարհայինն հոգսից:

Բայց մի փոքրիկ աղմուկ,—մկան շշուկ,
Մէկէն հասաւ իր ականջին լսուկ.
Զարթնեց, յետի թաթի վրայ պպզեց,
Աչքի երկվաթով աչքեր սրտրեց . . .

Ցատաւ՝ դիտում է դէպի մի կէտ անւ,
Ի՛նչ,—անփորձ մի մուկ վազում՝ վայր վերեւ . . .
Խորհրդաւոր քայլով, լցուած յոյսով,
Խորամանկ կատուն սողաց շտապ ոտով . . .

Ցանկարծ արագաշարժ ու արծնթաց,
Նա հասաւ իր որսին արդէն ճանկած . . .
Մլ՛ը-մլ՛ը. . . թաթով խփում՝ կիսակենդան
մկան.
Խլ՛շ-խլ՛շ... փշրեց մեռաց բարեաւ մկան...

ԹԱՓԱՌԱՑԱՆ

ՀԷՔԻԱԹՆԵՐԻ ԱՆՄԱՀ ՍՏԵՂԾՈՂԸ

Պատկերներ Անդերսէնի կեանքից

Շատ տարի անցած, երբ որ Անդերսէնն արդէն հռչակաւոր մատենագիր էր, եւ արդէն վաճառում էր նրա նոր վիպասանութիւնը «Իմպրօվիզատոր» վերնագրով, բէկտորը եւ նրա նախկին աշակերտ Անդերսէնը հանդիպեցան միմեանց կօպէնհագէնում: Բէկտորը առաջինը մօտեցաւ Անդերսէնին, ձեռք մեկնեց նրան եւ բաղցրութիւնով ասաց. „Ներեցէք ինձ, ես ստատիկ սխալւում էի եւ ուղիղ չէի դատում ձեր տաղանդի մասին;

Անդերսէնը, տեղափոխելով կօպէնհագէն, մի փոքրիկ սենեակ վարձեց մի տան վերնայարկում: Այս ընակարանը նկատագրել է նա իր մէկ վէպի մէջ, որ ունի այնպիսի վերնագիր „Սա միայն գիմատ ածող է„:

Թէեւ թագաւորը շարունակում էր իր նշանակած թոշակը Անդերսէնի համար, բայց նա դրանով հագիւ իր մանուածը դասերի վարձն էր կարող վճարել: Նրա բանը շատ վատ կլինէր, եթէ նրան յայտնի տներում որոշ օրերում ճաշի չհրաւիրէին: Շաբաթւայ բոլոր օրերը բաժանուած էր սրա նրա վրայ, նա ընկել էր «հերթական ճաշկերների» կարգը: Այսպիսի մի սովորութիւն կար կօպէնհանգէնում՝ աղքատ ուսանող-

ների համար: Այս սովորութիւնը մեծ օգուտ բերաւ Անդերսէնին. նա այս ճանապարհով աւելի շատ մարդկանց էր հանդիպում եւ ծանօթանում էր ժողովրդի զանազան դասակարգերի հետ, իսկ այդ ծանօթութիւնից նա շահում էր իբրեւ մատենագիր:

Այդ ժամանակին պէտք է վերաբերել եւ նրա ծանօթութիւնը Հէյբէրգ մատենագրի հետ, որ մի շաբաթաթերթի էր հրատարակում «Թռչող թղթատար» անունով: Այս թերթում տպագրուեց Անդերսէնի երկու ոտանաւորը «Երեկոյ» եւ «Սոսկալի ժամ», առանց հեղինակի ստորագրութեան: Ներքեւում դրւած էր մի փոքր «ն», որ կարդացողների կարծիքով նշանակում էր Հէյբէրգ; Այս մէկ լաւ առիթ էր ոտանաւորների յաջողութեան համար:

«Մի երեկոյ» գրում է Անդերսէնը,—«ես ճաշի էի հրաւիրւած ինձ լաւ ծանօթ մի ընտանիքում, ուր ինձ շատ սիրով էին ընդունում, բայց իմ աշխատութիւններս անւանում էին „յանգահիւսութիւն“ եւ այսպէս ասում էին քարի մտքով, որ ես ձեռք վերցնեմ քանաստեղծութիւնից: Մէկ էլ մտնում է տանտէրը, «Թռչող թղթատարի» թերթը ձեռքին, ուրախ ու զւարթ դէմքով, եւ ասում է ամենքին. «Այստեղ տպագրւած են երկու շատ պատւական ոտանաւորներ. այդ Հէյբէրգը շատ նշանաւոր մարդ է»: Ու նա ոգեւորւելով կարդաց իմ երկու ոտանաւորները: Սիրտս սկսեց տրըփտրըփալ, բայց ես ոչ մի խօսք չասացի: Բայց միւս կողմից մի օրիորդ, որ գիտէը թէ ում՝ ոտանաւորներն են, ուրախութեամբ բացագանչեց. «Այդ հո Անդերսէնի ոտանաւորներն են եւ ոչ թէ Հէյբէրգի»: Ծանկարծ տիրեց խորին լռութիւն. տանտէրն աչքերը վրաս պլըշացրեց եւ լուռ ու մունջ դուրս եկաւ սենեակից. նրանից յետոյ ոչ ոք ոտանաւորներիս մա-

սին ոչինչ հասաց, իսկ ես մտացի ստուած նստած, ինչպէս գլխիս ցուրտ ջուր ածած: Վերջերում Հէյքէրզը վերստացրեց իմ ոտանաւորս „Մեռնող երեխան“, որով ապացուցեց, թէ նա տպագրելու արժանի էր, բայց իմ ծանօթներիս մէջ դարձեալ այն կարծիքն էր տիրապետում, որ իմ բանաստեղծական տաղանդը շատ միջակ է›...

Անդերսէնը ամենայն չանքով պատրաստւում էր համալսարանի համար, եւ համարեա ամենայն օր դաս էր առնում լատիներէնից եւ յունարէնից: Նրա յամառամիտ ընկտորը իր անտեղի խստութիւնովն ու պարտաւանքովը այնպէս վախեցրել էր Անդերսէնին, որ խեղճը քիչ էր մտացել. որ անկախ մտածելու ընդունակութիւնը կորցնէր. բայց հիմն հանգստութիւն էր առնում նախկին հալածանքից եւ սկսում էր արագ զարգանալ:

1828 թուականի աշնանամուտին նա վերջապէս դարձաւ համալսարանի ուսանող: ‹Նա արդէն քսաներեք տարեկան էր,› գրում է Անդերսէնը,—‹բայց բնաւորութեամբ դեռ երեխայ էր. մի փոքրիկ միջնադէպ կարող է ընթերցողին զաղափար տալ, թէ ես ինչպէս էի նոյն տարիքում: Այն օրերում, երբ պէտք էր հարցաքննւէի համալսարան մտնելու համար, իմ մի ծանօթի մօտ, ճաշի ժամանակ, հանդիպեցայ մի երիտասարդի, որ միշտ լուռ էր եւ կարծես ամօթ էր քաշում խօսելու: Ինձ այնպէս թւաց, որ նա ուղղակի դրսի գաւառներից էր եկել, եւ ես շատ վստահ կերպով հարցրի նրան. ‹Դուք պիտի հարցաքննւիք այստարի›:—‹Իհարկէ›, պատասխանեց նա ժպտելով:—„Ես նոյնպէս. ինձ համար այդ մի նշանաւոր անցք է. եւ սկսեցի քանալ նրա առջեւ իմ սիրտն ու հոգին ինչպէս մտերիմ ընկերոջ, ամենեւին չկասկա-

ծելով որ ես խօսում եմ իմ ապագայ հարցաքննողիս հետ, մաթեմատիկայի յայտնի պոօֆէսսորի՝ Փօն Շմիդտէնի հետ: Երբ նրան հանդիպեցայ հարցաքննութեան օրը, մենք երկուքս էլ մի տեսակ շփոթութիւն զգացինք: Նա ինչպէս մեծահոգի մարդ, շատ էր փափագում ինձ սիրտ տալ, բայց չէր իմանում ինչպէս անէր; Մենք նատել էինք իրար հանդէպ սեղանի վրայ. պոօֆեսսօրս թերեւս դէպի ինձ ու կամացուկ հարցրեց ինձ. «Ի՞նչ նոր բանաստեղծութիւն կըտաք մեզ հարցաքննութիւններից յետոյ»:—„Չըգիտեմ, ասացի: Բայց դուք դեռ պիտի հարցաքննէք ինձ մաթէմատիկայից. ի սէր Աստուծոյ, դժւար հարցամունքներ չըտաք»: «Բայց չէ՞ որ էլի ինչեւիցէ մի քան կըգիտենաք, հարցրեց նա կիսածայն»: «Այո, ես բաւական ուժեղ եմ մաթեմատիկայում: Հէյդենգեօրի դըպրոցում ինձ էին յանձնարարում, որ բացատրեմ միւս աշակերտների դասերը, եւ միշտ լաւ թւանշան էի ստանում, բայց հիմա ես սաստիկ վախենում եմ»...

Համալսարան մտնելուց յետոյ Անդէրսէնի քնաւորութիւնը բոլորովին փոխուեց. նա դարձաւ աւելի զարթ, ուրախ ու աշխոյժ, որով եւ բոլոր ընկերների սէրը գրաւեց: Նէթ առաջ ուխտ էր դրել, որ ոչինչ չըգրեր, բայց էլի չէր դիմանում եւ գրում էր երբեմնին, այժմ ազատուած լինելով ուխտադրութիւնից, բոլորովին անձնատուր եղաւ իր վառ երեւակայութեանը եւ սկսեց գրել շարունակ: Նա մինչեւ անգամ անյաջողութիւնից չըվախենալով իր սեփական ծախքով տպագրեց մի երգիծաբանական վէպ: Մի քանի օրւայ մէջ բոլոր գրքերը ծախուեցան եւ մի գրավաճառ իսկոյն գնեց նրանից երկրորդ տպագրութեան իրաւունքը եւ սրանով բաւական շահեց նրա ապրուստի սուղ հնարները: Դրանից անմիջապէս յետոյ նա գրեց ոտա-

նաւորով իր առաջին դրամատիքական աշխատութիւնը, մի հերոսական կատակերգութիւն «Սէրը Նիկոդոսեան աշտարակի վրայ»: Դրա առաջին ներկայացումը շատ յաջող անցաւ. ուսանողները սկսեցին անվերջ ծափահարել,—հեղինակին կանչեցին «Հուռա», որից Անդէրսէնը ուրախութիւնից գլուխը կորցնելով դուրս պրծաւ թատրոնից եւ մինչեւ կօլլինի տունը մէկ շնչում փախաւ, ուր ընկաւ առաջին պատահած աթոռի վրայ եւ սկսեց հեկեկալով լաց լինել: Տանը մենակ տանտիկինն էր: Բարեսիրտ տանտիկինը Անդէրսէնի վրդովմունքը տեսնելով՝ կարծեց թէ խեղճին ծաղրել ու սուլել են, եւ սկսեց մխիթարել Անդէրսէնին՝ ասելով. «Այդքան մի վրդովւիր, հոգիս, էլէնշլէգէրին եւ ուրիշ նշանաւոր մարտենագիրներին նոյնպէս սուլոցների են ենթարկել»: «Բայց ինձ սուլող չի եղել, պատասխանեց Անդէրսէնը հեկեկալով, եւ ապա բացագանչեց,—ինձ ծափահարեցին, կանչեցին «Հուռա» . . .

«Օ՛, ինչպէս քախտաւոր էի ես այն ժամանակ», գրում է Անդէրսէնը,—„ես ամենքին էլ հաւատում էի, նւիրւած էի ամենքին, զգում էի այնպիսի գւարթութիւն, այնպիսի առոյգութիւն, երեւակայելու թարմութիւն . . . ամենաւաւ տների դռները ինձ համար բաց էին, եւ ես վերաւանում էի մէկ շրջանից դէպի միւսը, ուրախ, գւարթ, ինքնաբաւաւական: Եւ այսու ամենայնիւ ես իմ համալսարանական ուսումն շարունակում էի մեծ չանասիրութիւնով, եւ երկրորդ հարցաքննութեանս համար ես պատրաստւում էի առանց օգնողի: Միայն մի ծիծաղելի բան պատահեց ինձ քիմիայից հարցաքննւելիս պրօֆէսսօր Էրստէդի մօտ: Նրա բոլոր հարցմունքներին ես լաւ պատասխան տւի. սրա համար նա շատ ուրախացաւ, եւ արդէն ուզում էր թողնել ինձ, ասելով՝ լաւ, քաւական է, կարող էք

գնալ. մէկ էլ յանկարծ դարձաւ ինձ ասելով. „Ես կուզենայի մի քան էլ հարցնել. ասացէք, ի՞նչ գիտէք էլէկտրա-մագնիսականութեան մասին“: „Ես այդ խօսքն առաջին անգամն եմ լսում կեանքումս“, պատասխանեցի ես: „Միտքդ ամիսիկը, հէնց հիմա էր, որ դուք այնպիսի լաւ պատասխաններ տուիք, դուք անպատճառ մի քան պիտի ասէք ինձ էլէքտրա-մագնիսականութեան մասին“:—„Ձեր քիմիայում այդ մասին ոչինչ չկայ, պատասխանեցի ես վճռականաբար: Ձեր դասերից ես միայն մէկն եմ քաց թողել, գուցէ դուք հէնց այդ ժամանակն էք պատմել, որովհետեւ ես երբէք այդ քանը լսած չեմ“ ակամայից“: Էրսէտը ժպտաց իմ միամտութեանս վրայ, գլխով արաւ եւ ասաց. «Ափսոս, եթէ դուք իմ այդ հարցմունքին պատասխանէիք, ես լաւ նշան կդնէի, որովհետեւ ուղիղ որ լաւ պատասխանեցիք“:

Սրանից յետոյ երբ Անդէրսէնն առաջին անգամ գնաց այցելութեան Էրստէդին, խնդրեց նրան քացատրել, թէ ինչ քան է էլէկտրօ-մագնիսականութիւնը եւ ինչ նշանակութիւն ունի գիտութեան համար, որովհետեւ այդ քանն այն ժամանակ դեռ նոր էր եւ նրա հետազօտողներից մէկն էլ Էրսէտն էր: Տասը տարուց յետոյ, երբ Համալսարանի շինութեան մէջ անց կացրին էլէքտրա-մագնիսական հետազիծ, Էրստէդը մի տպագրած հրաման ուղարկեց Անդէրսէնին, որ նա կոպենհագէնի ամենալաւ լրագիրներից մէկում նկարագրէ հետազծի կազմութիւնը այնպէս, որ ժողովրդին լսելի լինի այդ մեծ գիւտի նշանակութիւնը, որի իրագործութեան համար գիտութիւնը պարտական է գլխաւորապէս Էրսէտի աշխատութիւններին:

Համալսարանական երկրորդ հարցաքննութիւնը նոյնպէս յաջող անցաւ Անդէրսէնի համար, ինչպէս

եւ առաջինը, իսկ Ծննդեան տօնի մօտ օրերում լոյս տեսաւ նրա բանաստեղծութիւնների առաջին ժողովածուն եւ մեծ ընդունելութիւն գտաւ թէ ընթերցողների եւ թէ կրիտիկայի կողմից: Երիտասարդ բանաստեղծի համար այժմ բացուած էր մի նոր ճանապարհ, որ լուսաւորուած էր արեւի պայծառ եւ անաղօտ լուսով . . .

7.

ԿԵԱՆՔԻ ՀԵՔԻԱԹԻ ՎԵՐՋԻՆ ԴԼՈՒԽԸ

Հէնց որ գարունը մնում էր, Անդէրսէնը զաղթելու սաստիկ ճկռտուն էր տալիս, եւ այն էլ անպատճառ դէպի հարաւ: Սկզբում շատ հնչին վաստակ տանալով իր մանր ոտանաւորների եւ թատերական գրւածների համար, հնար չունէր իր սեփական ծախքով ճանապարհորդելու: Թագաւորական մի գումար կար յատկացրած հքաւոր մտաւորականներին նպաստելու համար նրանց ճանապարհորդութեան ժամանակ, բարեկամները խորհուրդ տուին, որ քախտը փորձէ, թագաւորին դիմելով, որ նոյն նպաստին իրան էլ արժանացնէն:

Անդէրսէնը ամօթ համարեց սակ օգնութիւն խնդրելու համար թագաւորին դիմել, նա վճռեց նէր տանել թագաւորին իր առաջին բանաստեղծութիւնների ժողովածուն, որ նոր էր լոյս տեսել: Թագաւորը ողրմածաբար ընդունեց նորահաս հեղինակի ընծան, հնորհակալութիւն յայտնեց նրան եւ ժպտելով զլխով արաւ, իբր նշան, որ կարող է երթալ: Տեսնելով, որ թագաւորն արդէն իրան արձակում է եւ ուրեմն ժամանակ կորցնել կարելի չէ, Անդէրսէնը անվստահ ձայնով յայտնեց թագաւորին իր դրութիւնը, եւ թէ ինչպէս թագաւորական օժանդակութեան

շնորհիւ կարողացաւ համալսարանումն ուսում առնել եւ աւարտել յաջողութեամբ:

—Այդ շատ գովելի է, ասաց Թագաւորը քաղցրութեամբ:

—Ձերդ մեծութիւն, քարևհաճեցէք հրամայել, որ ինձ օժանդակութիւն տան մի փոքր ճանապարհորդութեան համար,—հազիւ կարողացաւ ասել Անդէրսէնը յուզած ձայնով:

—Խնդիրը տուէք ինձ, ասաց Թագաւորը:

Անդէրսէնն իսկոյն հանեց խնդիրը, որ վաղօրօք պատրաստ ունէր եւ տուաւ Թագաւորին:

—Ահա խնդիրը, Ձերդ մեծութիւն: Ինձ ասացին, որ ես պարապաւոր եմ՝ խնդիրքով դիմել ձեզ, քայց, ճշմարիտն եմ ասում, ես շատ էի ամաչում՝ ձեզ նեղութիւն տալ:

Թագաւորը քարձրաձայն խնդաց, խնդիրն ընդունեց, մի քանի օրից յետոյ Անդէրսէնին փող տուին ճանապարհորդութեան համար: Այնուհետեւ, այսինքն՝ 1831 թւից սկսած՝ մինչեւ իր մահը—1875 թիւը, հէքիաթների հռչակաւոր ստեղծողը ոչ մի ամառ քաց չէը թողում, այլ միշտ գնում էր արտասահման: «Ճանապարհորդել նշանակում է ապրել» ասում էր նա միշտ: Անդէրսէնն զգում էր, որ իր ամենալաւ դպրոցը, ուր կարող էր աւելի շատ քան սովորել, այդ ճանապարհորդութիւնն էր աշխարհիս երեսին, եւ հէնց այս է պատճառը, որ նրա հէքիաթները այնքան թարմ են եւ այնքան բազմատեսակ:

Բացի այն, որ նա սաստիկ հակում ունէր ճանապարհորդելու, նա ունէր եւ մի այլ պատճառ երբեմնապէս հեռանալու հայրենիքից: Պատճառն այն էր, որ նրա հայրենակիցները, որոնք հիմա սիրում են նրան ամենաջերմ սիրով, սկզբում սաստիկ վըր-

դովում եւ վշտացնում էին խեղճին՝ շարունակ յարձակելով նրա վրայ եւ դատափետելով նրա աշխատութիւնները: Խեղճ հեղինակը համարեա ամեն օր մի որ եւ է թունաւից յօդուած էր կարդում իր աշխատութիւնների դէմ: Մէկը ոտանաւորը չէր հաւանում, միւսն ասում էր շատ է կոտրտւում եւ քնքշանում, վերջապէս յարձակւում էին նրա մինչեւ անգամ չնչին տպագրական վրիպակների վրայ: Ինքը քնքոյշ եւ դիւրազգաց սրտի տէր, այդ տեսակ անխիղճ յարձակմունքներից այնքան վրդովւում էր, որ հիւանդանում էր: Բարեկամներն էլ խորհուրդ էին տալիս, որ շուտով հեռանայ Կոպէնհագէնից: Եւ նա հեռանում էր եւ պտըտւում ամեն քաղաքում եւ երկրում: Այդ ճանապարհորդութեան ժամանակ մի օր էլ լուր ստացաւ հայրենիքից, որ իր մայրը վախճանել է: Այդ մի մեծ հարւած էր Անդերսէնի համար: Նա ինքն իրան բոլորովին որբ էր զգում, ինչպէս մի երեխայ. նրանով էր միայն միխիթարւում, որ մայրը մեռնելուց առաջ աչքովը տեսաւ իր որդու բախտաւորութիւնը:

Անդերսէնը 1834 թւի ամբողջ ամառը արտասահմանում անց կացրեց: Նա գնաց Հոռմ, ուր շատ բան տեսաւ եւ շատ բան ուսումնասիրեց իր մէկ ճարտարապետ բարեկամի հետ. այնտեղից անցաւ Նէապօլ, Վենետիկ, Վիէննա, Միւնխէն եւ վերադարձաւ կրկին հայրենիք, ուր Կօլլէնի տանը նրա համար շինել էին մի քնակարան, իբրեւ նէբ ցկեանս, այսինքն մինչեւ իր մահը: Բայց չընայած տնական յարմարութեանը, անձնուէր բարեկամներին եւ թագաւորի անսփոփոխ բարեհաճութեանը, անհնարին էր նրան տանը պահել: Հէնց որ գարնան նշաններն երեւում էին, նա չուող թռչնի պէս պատրաստւում էր թռչելու

ով գիտէ ղէպի ուր: Եւ որտեղ ասես, որ նա չէր եղել եւ չէր լինում տարւայ ընթացքում: Երեք անգամ գնացել էր Իտալիա, չորս անգամ Գերմանիա, յետոյ— Սպանիա, Փորթուգալիա, Զմիւռնիա, Պաղեստին, Պօլիս, Շէյգիա, Նորւէգիա, Հոլլանդիա, Շոտլանդիա, եւ վերջապէս Անգլիա: Ամեն տեղ քարեկամական կապեր ունենալով շատերի հետ, ծանօթանալով եւ քարեկամանալով ժամանակակից նշանաւոր անձնաւորութիւնների հետ, ճերը էր բերում միշտ թարմ եւ նորանոր պաշար իր հէքիաթների համար, եւ նրա հռչակը, իբրեւ մատենագրի, օրէցօր աճում եւ մեծանում էր:

Ահա թէ ինչ է ասում ինքն Անդէրսէնը իր հէքիաթների համար, «Գասկած չկայ, որ Դանիայում իմ աշխատութիւնների մէջ ամենից շատ գնահատում են իմ „Հէքիաթները“, այս պատճառով հարկ եմ համարում դրանց համար ասել ահա ինչ:

„Առաջին անգամ, երբ դուրս եկան իմ հէքիաթները, շատ սառն ընդունեցան, նրանց արժանաւորութիւնը շատ ուշ գնահատեցին: 1835 թւին, երբ առաջին վիպասանութիւնս դուրս գալուց յետոյ,— վիպասանութիւնս, որ այնքան աղմուկ բարձրացրեց, ես հրատարակեցի իմ „Հէքիաթների“ առաջին տետրակը, կրիտիկոսները յուզեցան սաստիկ եւ ըղաեցին, թէ Անդէրսէնի տաղանդը շատ շուտ թառամեց. թէ քաւական լաւ բան էր նրա վիպասանութիւնը եւ մէկ էլ յանկարծ երեխայ դառաւ եւ սկսեց գրել հընձին „Հէքիաթներ“: Փոխանակ խրախուսելու երիտասարդ գրողին, եւ ուրախանալու նրա բռնած նոր ուղղութեան համար, սկսեցին հայհոյել նրան: Մինչեւ անգամ իմ քարեկամներիցս շատերը, որոնց կարծիքներն ինձ համար թանգ արժէին, նրանք էլ սաստիկ

յորդորում էին ինձ, որ էլ հէքիաթ չգրեմ: „Դու հէքիաթագրանի կոչումն չունիս“, հաւատացնում էր մէկը. „Սովորիր Քրանսիացիներից“, խորհուրդ էր տալիս երկրորդը. այսպէս եւ ուրիշները“: „Գրականութեան Ամսօրեայ Տեսութիւն“ լրագիրը ոչ մի խօսք չըխօսեց իմ „Հէքիաթների“ մասին, եւ մինչեւ վերջն էլ պահպանեց իր լռութիւնը: Բայց որքան էլ ժամանակակից քննադատները յարձակուեցան վրաս, ես այսու ամենայնիւ չկարողացայ ձեռք վերցնել այդ կարգի աշխատասիրութիւններից: Հետեւելով Մուզէուսին, որ հաւաքում էր „Ժողովրդական հէքիաթները Գերմանիայի“, ես սկսեցի քրքրել իմ հին տետրակներս, որոնցում գրել էի մանկութեանս ժամանակ լսած հէքիաթներս, եւ իմ ուզածիս պէս միակերպ անանունի „Մանուկներին պատմուած հէքիաթներ“, թէեւ իսկապէս ես գիտէի, որ նոյն հէքիաթները հետաքրքրութեամբ կըկարդան թէ մեծերը եւ թէ մանուկները:

„Մի քանի անձինք գովասանեցին այդ հրատարակութիւնս: Այդ եղաւ մի տեսակ կրակի վրայ իւղ ածել, եւ ես այլ եւս չըկարողացայ դիմանալ, եւ մէկը միւսի ետեւից դուրս գրերի երկրորդ, երրորդ, չորրորդ եւ յաջորդ տետրակները: Ես յօրինեցի ծընընդեան թիւ, այսինքն մէկը դուրս գրերի յատկապէս ծննդեան տօնին մանուկներին ընծայելու համար, եւ այնուհետեւ ամեն ծնունդին տալիս էի մի նոր գրքոյկ:

Զըտեսնուած յաջողութիւն ունեցան իմ այդ հրատարակութիւնները: Ամենքն էլ հաւանում էին մանաւանդ „Մանուկներին պատմուած հէքիաթները“: Ոչ մի տուն չըկար Դանիայում, ուր որ մուտք չըլինէին գործած իմ ձոյլ հէքիաթներիս ժողովածուի

երեք գրքոյկները, որոնցում՝ առաջին անգամն էին տպագրված „Անճոռնի բառիկը“ եւ „Սոխակը“:

Բոլոր ամսագրերն ու օրաթերթերը ուրիշ վերպ սկսեցին երգել, մանաւանդ երբ գերմանական եւ անգլիական օրագրերում՝ սկսեցին փառաբանել Անդէրսէնի նոր աշխատութիւնները: Նրան համեմատում՝ էին Լաֆոնտէնի հետ, հէքիաթներն անուանում՝ էին անմահ ստեղծագործութիւններ, եւ միաձայն հաստատում՝ էին, որ Անդէրսէնն իր հէքիաթներով պատկառելի տեղ է գրաւել գրականութեան մէջ:

Սկսած 1834 թուականից մինչեւ 1852ը Անդէրսէնի հէքիաթները մի քանի անգամ՝ տպագրուեցին, յետոյ բոլորը հաւաքեցին մի գրքում՝ եւ հրատարակեցին պատկերազարդ: Այդ հրատարակութիւնը լոյս տեսնելուն պէս՝ իրար ձեռքից յափշտակում՝ էին: Նոյն հէքիաթներն սկսեցին թարգմանել բոլոր եւրոպական լեզուներով եւ շատ չանցած՝ Հին ու Նոր աշխարհի բոլոր մանուկներին արդէն ծանօթ էր անմահ հէքիաթների ստեղծողը:

Նա ամենի թանգագին հիւրն էր ամեն տեղ: Ամեն տեղ նրան փառաբանում՝ էին, նրա համար սարքում՝, պատրաստում՝ էին հանդիսաւոր ընդունելութիւն, երգում էին գովասանական երգեր, ինչպէս Հոլլանդիայում ու Շվէյցիայում, ուր քանդորները եւ ուսանողները նրա պատուի համար յօրինեցին երաժշտական ոճն: Անգլիայում, քարձր դասակարգի մէջ, ուր շատ դժուարութեամբ են մնում՝ նոյն իսկ նշանաւոր ծագումն ունեցող անձինք, եթէ պաշտպան չունին, նոյն քարձր հասարակութեան համար Անդէրսէնը միշտ նրանց ցանկալի հիւրն էր, եւ ամենագործոց տիրապետողները հնադարեան ամրոցների, մեծ պատիւ էին համարում՝ երբ, իրաւունք էին ստանում՝ իրանց ճոխ

պալատներում՝ հիւրասիրելու ժողովրդի համեստ զաւակին:

Ամենաերկրալից հանդիպումը Անդերսէնի համար Դիկէնսի հետ ծանօթանալն էր, որ Անգլիայում նոյն ժամանակ ամենից նշանաւոր քանաստեղծ վիպասանն էր: Այդ պատահեցաւ Լօնդօնումը 1847 թուին, լուրի Բէսթինգսօնի սալօնում, ուր երկու նշանաւոր մատենագիրներն էլ հրաւիրուած էին ճաշի: Այդտեղ հրաւիրուած էին շատ անձինք Լօնդօնի բարձր դասից եւ ամենի վրայ մեծ տպաւորութիւն գործեց ժամանակակից ամենամեծ մատենագիրների անակնկալ հանդիպումը: Ճոխ սեղանատունը ծփում էր բազմաթիւ ճրագների կրակի մէջ, ծառաները պապղուն ըզգեստով, մաշիկներով, մետաքսեայ գուլպաներով, ապիտակացրած երեսներով—սուս ու փուս պտրտում էին ամեն բարիքով լիքը սեղանի շուրջը, անուշահոտ ծաղիկների եւ մրգերի բուրմունքով լցուել էր դահլիճի օդը: Գեղեցկազարդ տիկինները՝ պարահանդէսի հագուստով, իսկ տղամարդիկը ֆրակներով, բարձրահասակ, ինքնագոհ դէմքով, կարծես մէկ մէկ թագաւոր, տիկինների հետ կոնափակ արած, ներսի դահլիճներից սկսեցին դուրս գալ ջուխտ ջուխտ եւ հաւաքուել ճաշի սեղանի շուրջը: Այդտեղ ինքը լուրի Բէսթինգսօնը Դանիացի համեստ մատենագրին տարաւ սիգապանծ, գեղեցիկ-ջէնտլմէն Չարլզ Դիկէնսի մօտ եւ ժպտալով՝ ներկայացրեց նրանց միմեանց:

Նրանք միմեանց հանդիպեցին ինչպէս վաղուցայ ծանօթներ, իբրեւ հոգեկից բարեկամներ: Նրանց հոգեկան ազգակցութիւնը վաղուց արդէն այդ երկուքին կապել էին միմեանց հետ: Նրանք երկուքն էլ վաղուց ուսումնասիրել էին միմեանց իրար գրւածներից,

եւ այդ երեկոյից սկսած՝ նրանց մէջ ամբացաւ ամենաջերմ՝ եւ ամենամտերիմ բարեկամութիւն:

Վերջերումը Դիկէնսը Անդերսէնին տարաւ իր մօտ իբրեւ հիւր, եւ Անդերսէնը իւրապատում կենսագրութեան մէջ յիշում է իր անցկացրած օրերը Անգլիացի մատենագրի տանը, եւ այդ օրերը նա իր կեանքի ամենաբաղդը եւ ամենաակաբդականն է համարում: Նա գրում է. „Դիկէնսի աչքերը վառվռուն էին, խելօք, աչքի ընկնող դէմք եւ դիւթող ձայն: Վեր առէք նրա գրւածների ամենալաւ տիպերը, միացրէք նրանց բոլորին մէկ տեղ, շինեցէք մի գաղափարական մարդ,—այդ կըլինի „Դէւիդ Կօպէրֆիլդի“ հեղինակի ամենաճիշտ պատկերը“:

Ժամանակակից եւրոպական մատենագիրներից—քառասնական, յիսնական եւ վացսնական թւականների—շատ քչերը կըլինին, որ անձամբ ծանօթ չըլինին եղած Անդերսէնին: Նրա ընկերասիրութիւնը եւ միշտ ուրախ ու զարթի բնաւորութիւնը գրաւում էին ամենին թէ մեծերին եւ թէ մանուկներին: Նա ճշմարիտ որ նմանում էր առասպելական արքայազնին, որին բարի ոգիները զարդարել էին ամեն տեսակ բարիքներով, եւ այսու ամենայնիւ նա միշտ մընում էր նոյն համեստ եւ պարկեշտ, նոյն ամօթխած որդին ժողովրդի, որի հարազատ եւ հաւատարիմ զաւակն էր նա:

Կօպէնհագէնում էլ սկսեցին հետզհետէ յարգել եւ գին դնել Անդերսէնին, որպէս իրանց հարազատ մատենագրին. Դանիացիք վերջապէս սկսեցին պարծենալ նրանով եւ հպարտանալ: Թատրօնումը, ուր համարեա միշտ ներկայացնում էին նրա կատակերգութիւնները եւ օպէրէտները, եւ ուր նա գնում էր ճշտութեամբ ամեն երեկոյ, երբ որ Կօպէնհագէնում

էր լինում, նրան առաջին կարգումը պատահում տեղ էին նշանակել ծրի միւս նշանաւոր թատերագիրների կարգումը—Էշենհլէգերի եւ Տօրւալդսէնի: Շատ անգամ դրանց երկուսի մէջ նստած՝ որոնց երկուսին էլ շատ սիրում էր Անդէրսէնը,—հեզահոգութեամբ միտն էր բերում այն ժամանակը, երբ նրան մեծ ղժւարութեամբ էին ներս թողում խմբերգիչների օթեակը, եւ ինչքան քախտաւոր էր զգում իրան, որ կարող էր գոնէ ծծել թատրօնի օդը . . .

Գօպէնհագէնումը՝ սկսած թագաւորի պալատից՝ բոլոր մեծամեծների դռները բաց էին նրա համար, եւ ամեն մէկը նրանցից առաջարկում էր նրան ամառային եղանակը անց կացնել իր արուարձանի ամարանոցում, եթէ չերթայ արտասահման: Նրա անուանակոչութեան եւ ծննդեան տօները, սրբութեամբ յարգում էին նրա բարեկամները. ապրիլի երկուսին, օրւայ եղանակն ինչպէս էլ լինէր, նրա առանձնասենեակը դառնում էր մի կատարեալ ծաղկանոց . . .

Անդէրսէնի համար կատարւած ամենափառաւոր հանդէսը նրա գրական գործունէութեան յոբելեանն էր. որ կատարւեց իր հայրենի քաղաքում՝ Օդէնզէում, եւ որից սկսեցինք մենք ներկայ կենսագրութիւնը: Բացի պաշտօնական մեծարանքից Անդէրսէնը նոյն տօնին ստացաւ շատ անակնկալ նւէրներ: Թագաւորն իր ձեռքով կապեց մի բարձր շքանշան. երեկոյին թատրոնում ներկայացրին նրա թատերական բոլոր գրւածներից, դերասաններն ու ժողովուրդը անընդհատ արտայայտեցին իրանց համակրութիւնը, պսակները, ծաղկափունջերը, ծաւերը, ոտանաւորները, նամակ-



Հանս Քրիստիան Էնդերսեն

ներ մանուկներից աշխարհիս զանազան մասերից— այդ բոլորը ամեն կողմից թափւում էին նոյն օրւայ հերոսի—Անդէրսէնի վրայ:

Ամերիկայի Նիւ-Եօրքից մի աղջիկ երեխայ ուղարկել էր ընծայ մէկ ոչլաթ, իր բոլոր հարստութիւնը, որ նա խնայել էր իր դրամատուփում: ուրիշ շատ երեխաներ էլ, վաղօրօք ծախել էին իրանց ձեռքով շինած շատ բաներ եւ նրա փողը ուղարկել Անդէրսէնին, կարծելով, որ նա դեռ էլի աղքատ է եւ չքաւոր, եւ փափագ էին յայտնում նամակով, որ այդ փողը օգնէ նրան դուրս գալու չքաւորութիւնից: Նոյն օրը Կոպէնհագէնում մի ատորագրութիւն բաց արին, որին մասնակցեցին ամենայն ուրախութեամբ թէ հարուստները եւ թէ աղքատները, թէ մեծերը եւ թէ մանուկները, այն նպատակով, որ „երեխայոց բարեկամի“ համար մի յուշարձան կանգնեցնեն պալատական պարտիզի նոյն անկիւնում, ուր խեղճ Հանս Քրիստիանը թաք էր կենում խիտ թուփերի մէջ, որ թաքուն ուտէ իր մի պատառ չոր ու ցամաք հացը:

Այո, կարելի է համարձակ ասել, որ ոչ մի մահկանացու արժանացած չէ այսպիսի երջանիկ եւ պատուական բախտի, ինչպէս Անդէրսէնը: Կոպէնհագէնի մօտ, քաղաքից դուրս մի գեղեցիկ եւ խաղաղ հովանոց կար, որ պատկանում էր Մելխիօրի ընտանիքին: Այս ընտանիքը Անդէրսէնի ամենամօտ բարեկամներից էր, եւ նա վերջին տարիներում, ծերութեան ժամանակ կենում էր նրանց մօտ: Նրա վրայ այնպէս էին խնամք տանում եւ այնպէս պահպանում, ինչպէս երեխայի: Իր համար յատկացրած երկու սենեակն այնպէս սարքել կարգել էր, եւ այնքան էլ յարմար տեղ էին սենեակները, Զունդի ուղիղ դէմը, որ նրա մօտ այցելութեան գնացողները էլ չէին ուզում հեռանալ այն-

տեղից: Հիւանդ ժամանակը, երբ էլ չէր կարողանում տանից դուրս գալ, նստում էր պատուհանի մօտ եւ նայում մօտովն անցնող նաւերի՝ վրայ, կամ թէ չէ՝ հատատ թղթից զանազան խաղալիկներ էր շինում;—թիթեռնիկներ, ծաղիկներ եւ այլ բաներ:

Անդէրսէնը միշտ մտորում էր իր սեփական ամարանոցն ունենալ, արաբական ճաշակով ու պարտէզով, ուր պիտի դնէր բոլոր դարերի նշանաւոր մատենագիրների կիսարձանները: „Կընստեմ, ասում էր, նրանց մէջ եւ ամեն օր կըզրեմ մի նոր հէքիաթ եւ վէպիկ“: Բայց ծերունու մտորմունքը չիրականացաւ: Օգոստոսի 4-ին 1875 թւի, երբ արդէն բոլորովին պատրաստուել էր երթալու Շէյցարիա, եւ ճանապի բոլոր իրերէններն արդէն դուրս էին տարել, մնում էին միայն, որ ինքն էլ դուրս գայ, քայց խեղճն այլ եւս դուրս չըգնաց տանիցը—նա նստած տեղը ննջել էր եւ այդ ննջով ճանապարհորդել էր դէպի անմահութեան աշխարհը.—այսքան խաղաղ եւ հանգիստ եղաւ նրա վախճանը . . .

Մենք կըվերջացնենք մեր պատմութիւնը այն խօսքերով, որ ոսկի տառերով տպած էր Բեռլինի մատենագիրների կողմից ուղարկուած մետաղեայ պսակի ժապաւէնի վրայ—

„Ո՛չ, դու չըմեռար, թէեւ աչքերդ խփեցան,
„Մանկանց սրտերում ապրելու ես յաւիտեան“...

(Е. А. Сисоева. Родникъ, № 7—8, 1890.)

Գ. ԱՂԱՅԱՆՑ



Վեռանցոյ տիՊր

Նկար Գեորգ Բաշինջաղեանի

ՈՒՍԱՆՈՂԻ ՆԱՄԱՆԸ

Աստւական Հայրիկ, սիրելի մայրիկ,
Ա.ստւած Ձեզ կեանք տայ և հազար բարիք.
Ձեր ձեռքերն աչեր սիրով կըպաչեմ։
Պանդխտիս կարօտ արցունքով թրջեմ։
Ա՛յ մի տարի կայ ճիշտ որ հեռացայ,
Ձեր տեսութիւնից ես զրկըւեցայ.
Ա՛լ չէ պատահել դէթ լոկ մի րոպէ՝
Որ Ձեզ չիշելով իմ սիրտ չըտրոփէ.
Եւ մի՛թէ հնար է ինձ Ձեզ մոռանալ.
Հոգիս չէ կարող երբէք ուրանալ
Այն խնամք որ տըւիք իմ թարմ հասակին,
Զինչ հմուտ պարտիզպան, նորաբոյս ծաղկին.
Մի՛թէ կարող է օտար աշխարհքը՝
Անոյշ լինել՝ քանց Հայրենի յարկը,
Պանդխտութեան մէջ մի մարդ աւելի
Սիրէ գնահատէ իր տունն հայրենի։
Ձեզանից հեռու՝ փափագով, յուսով՝
Օրերն եմ թւում իր վայրկեաններով.
Եւ միշտ սպասում եմ անհամբերաբար,
Որ արձակուրդի ժամանակը գար,
Յայնժամ կըպատանամ, կըփութամ ձեզ մօտ
Եւ որդիական առնեմ զիմ կարօտ։
Այժմ էլ Ձեր գրութիւնք. այդ են ինձ համար,
Ինչ որ ցօղն այգուն է բուսոց գալար,
Ինչ որ է լուսին, գիշերւան խաւար,
Ինչ որ անձրևն է ծովին փրփրավար։
Վերջին նամակաւդ, թղթատանից առայ

Այն ջոկ դումարն, որ ղրկես իբր ընծայ.
Առանց հաշւելու, որ ամեն ամիս
Օգնում ես որդւոյդ, և ուսանողիս։
Իսկոյն այդ փողով դնեցի շատ բաներ.
Լաւ հեղինակաց ընտիր գրւածներ.
Առայ նոր շորեր, կօշիկ գալոշտիկ,
Մի քանի օրից, երբ գայ սուրբ Զատիկ,
Պէտք է որ իմ մեծ ուսուցիչների,
Գնամ այցելութեան քաղաքավարի։
Քո խորհրդին, հայր, միշտ հետևած եմ.
Նախ որ վարպետներս յարգանօք սիրեմ։
Նրանց շնորհիւ, քո օգնութիւնով
Երկրորդ դասատուն անցնեմ շատ շուտով։

Դիտացիր հայրիկ, որ միանգամայն
Օրըս չեմ անցնիլ դատարկ ընդունայն,
Ահա այս կերպով շատ կարճ միջոցում
Բաւական առատ ստացայ ուսում.
Եւ աշխատելով միշտ և անդադար,
Պարգևներ առայ, և գովեստ արդար.
Շատ ծանօթութիւն դիզեցի լեզւից.
Զանազան տարրերը բարձր իսկ դիտութեանց։

Այլ ամենից շատ սիրեցի զբարին
Սովորիլ գործել, անխափ բոլորին.
Բարւոյն Սէրն՝ Աստուած տայ հոգւոյն ընծայ,
Որ յերկրի, երկնից համն առնէ, ցնծայ։

Սրտեօք գալիս է այն օրն, ուր հայր իմ,
Որ ուսմամբ Ձեզ ևս օգտակար լինիմ . . .
Բայց սրովհետև նա չէ աւարտած.
Առ այժմ գէթ այստեղ օգնեմ իմ եղբարց։
Մասնագիտութիւն, լեզւաց ուսումը,
Եւ այն օգտակար հմտութիւնները,

Որով զարգանամ ուսումնարանում,
Օգտակար լինիմ լոկ ապագայում.
Իսկ այժմ վճռել եմ, ներկայի համար
Ուշադրված փողոցդ խնայողաբար
Հաւաքել կազմել մի փոքրիկ գումար՝
Որը և աղքատիկ դասընկերոց համար.
Կարծեմ թէ քսակիս այս հաւաքածուն
Աւելի օգուտ տայ այն խեղճ որբերուն.
Քան թէ մսաւոր ուսումս անկատար,
Որ առ Ձեզ սիրոյս չէ դեռ յայտարար։
Դու էլ իմս Հայրիկ, թէ համակրում ես
Այս իմ սուրբ փափագ, անշուշտ կըշնորհես
Քեզանից մի նըւէր խեղճ ուսանողին.
Դասընկերներին, որ ինձ պէս աննման
Ձուռնին հայր, և ոչ միջոց զարգացման։
Մնամ ձերդ անձնուէր հարազատ որդի.
Տալով երախտեաց համբոյրն իմ սրտի։

Պ. Հ. Աղաւնեան

Կ. Պոլիս

ԴՐԱԽՏ

(Պարսկական զրոյց)

Ամբողջ տարի տոզոտում, պարսկաստան մի քաղաքի մօտ էր բնակում Աբդուլ աղան. երկրի տէրն էր նա։

Սատանան տուել էր նրան իր բոլոր չարութիւնները, Ատուած վերցրել էր նրանից խիղճը և Ահրիմանի [1] չար ոգինները օրը մինչև երեկոյ շրջում էին նրա ականջին այնպիսի չարութիւններ, որոնցից լինքն Ահրիմանը սոսկում էր շատ անգամ։

Աբդուլ աղան հարուստ էր Թագաւորի պէս. նրա պալատը աշխարհիս ամենագեղեցիկ շէնքն էր, նրան էին գովաստանում երգիչները, նրա պալատի գեղեցկութիւններից յաճախ իր „երժէնք“ գրքի երեսներն էր լցնում Մանի նկարիչը [2]։ Նրա ձիերը արաբ նժոյգներ էին, տաւարները հաշուել չէր կարելի. տուն ու տեղը և ամբարները այնչափ լիքն էին, որ շատ անգամ աւելորդ փտած պաշարները էին դուրս թափում պալատից։

Եւ եղաւ մի օր, որ հեռու Հնդստանից Կարմիր տարերի մօտ եկաւ մի դէրվիշ, նստեց Աբդուլ աղայի դռան առաջ, սպասեց որ իր բաժինը տան և խնդրեց՝ պալատի տիրոջը տեսնել։

---

1 Կրակապաշտների չարի աստուածը,

2 Մի առասպելական նշանաւոր նկարիչ էր,

Աբդիւլ աղան լը հարեմուճն էր, նա ծիծաղեց, երբ ասացին նրան որ մի դէրվիշ կամենում էր տեսնել Նրա հետ. հրամայեց նեղս կանչել դէրվիշին հարեմը և մտքումը դրեց՝ Նրան երգել-պարել տալով՝ զարճանալ և զարճացնել լը կանանց։

Եւ եկաւ դէրվիշը, պատմեց Հնդստանի մասին, նկարագրեց ուրջանների վտանքը, Նրանց զարմանալիութիւնները, երգեց աղօթքները և Նստելով գետնի վրայ՝ սկսեց վայրենի մի պար։

Աբդիւլ աղան շատ ծիծաղեց, շատ զարճացաւ, հրամայեց դէրվիշին կերակրել և յետոյ ասաց Նրան.—Դերվիշ բարբա, դու երկրները ես տեսել, շատ մարդ ես եկել, առածն ասում է, որ „շատ ապրողը չի շատ բան լսանալ, այլ շատ մարդ եկողը“, արի—քեզ լսի պատառոս յոյց տամ, տեսնենք կըհաւանե՞ս։

Եւ տարաւ Նրան լը հետ, յոյց տուաւ հայելապատ պատերով, գեղեցիկ ծաղիկներով և գոյնզգոյն քարերով յատակած սրահները, յոյց տուաւ լը թաւշապատ օթոցներով դիւանխանէն, չքեղ պատկերներով զարդարած բաղխանան, առաջնորդեց լը հարեմի Նեղսը, յոյց տուաւ կանանց. տարաւ գոմը՝ հիացրեց լը տաւարների քանակութիւնով և գեղեցիկ նժոյգներով... յոյց տուաւ ցորենով և արմավիքով լիքը հսկայական ամբարները, անհամար կարասներով լիքը մառանը, յետոյ տարաւ պարտէզը որ յոյց տալ այդ աւազաններով լիքը պերճ այգին, ուր անհամար էին հովանաւորող նոճիները, պաղատու ծառերը, ճիներով լիքը շատրւանները և երփներանգ ծաղիկներով անուշահոտ ծաղկանոցները...

Դէրվիշը տեսաւ բոլորը, սառնութեամբ նայեց պարտէզին, կանգ առաւ Աբդիւլ աղայի առաջ, նայեց Նրան մի հեգնական ժպիտով և ասաց.

—Աբդիւլ, որդիս, այս բոլորը լաւ են. լիքն է ամբարդ հնարի-փերձներ են կանայքդ. չքեղ է պարտէզդ և պերճ՛ պատառոտ... այս բոլորի կէսը չունի հնդիկական ուրջան. բայց արի ինձ հետ, և ես քեզ մի քանի հարցեր ունիմ անելու։

Ցետոյ արագութեամբ մօտ տարաւ պարտիզի ցանկապատ-

ոչն, ցոյց տուաւ դբսում—ո՛չ շատ հեռու երևցող տները աւերակները և հարցրեց.

—Ի՞նչ են սրանք։

—Ա՜խ, սրանք, ծնծաղեց Աբդիւլը—սրանք այն տներն են, որ ես քանդել տւի. որովհետև մատղիը եմ պարտէզս այս կողմից լայնացնել։

—Ի՞նչ եղան սրանց մէջի բնակիչները։

—Վռնդեցին, ասաց ազան—այդ հողը բոլորը իմն է, վերնատեղի նրանց հեռու։

—Ո՞ւր գնացին։

—Չըգիտեմ

—Լաւ ուրեմն, ասաց դէրվիշը—ես գիտեմ. երեկ անցնում էի մի գեղ տխեայ մի խումբ խեղճ մարդիկներ, որոնք մերկ, քաղցած և կիզտոտ էին... երեքը նրանցից մեռել էին ցրտից, երկուսը քաղցածութիւնից մեռնում էին, և մնացածն էլ խենթացածի պէս վրաս թափւեցին և խլեցին մօտիս ամենավերջին կտոր հացը... քաղցած էին սոված գայլերի պէս...

—Ա՜խ, գոչեց ծնծաղելով Աբդիւլը—ինչ գողեր են դրանք...

Դէրվիշը տարաւ նրան պատուհից դուրս, ցոյց տուաւ հեռուում երևցող գիւղերը և հարցրեց.

—Գիտե՞ն են դրանք։

—Իմն են։

—Ես անցայ այդ գիւղերից, ասաց դառնութեամբ դէրվիշը—գիւղերի մէջ դեռ ևս մի քանի կով և 3—4 ոչխարներ մնացել էին...

—Իրա՜ւ, բացագանչեց Աբդիւլ ազան—ուրեմն վերակացուիս պիտի ուղարկել, որ գնայ այդ գիւղացիներից հարկը ժողովի.

—Այո՛, աւելացրեց դէրվիշը—յայտնիր վերակացուիդ, որ կտոր գիւղերի մէջ մեկը, որ մի կտոր չոր հաց դեռ ևս ունեը կրծելու...

Ցետոյ դէրվիշը լռութեամբ գնաց դէպի աւազանը, մտածեց խորապէս և ասաց.

—Աբդիւլ, պալատդ և պարտէզդ լաւ են, պակասում է ամենագլխաւորը... այդտեղ (և նա ցոյց տւաւ գլուղերը) դրամատ պիտի շինել և այն ժամանակ մնակ դու կըլինես, որ կունենաս մի պալատ, կեանք և դրամատ աշխատիս վրայ, որոնցից գուրկ է Հնդկաստանի ամենամեծ ռաջան իսկ...

Ասաց, օրհնեց Աբդիւլլին, մի կտոր հաց դրաւ կողքի տոպրակի մէջ և առանց ետ նայելու՝ հեռացաւ պալատից և երկրից...

Աբդիւլ ազան երկար մտածեց, թէ ինչ ասեց դէրվիշը, մինթէ այս երկրի վրայ էլ կարելի էր դրամատ շինել։

Հրամայեց կանչել իր ծերունի Ալլեին 1, պատմեց նրան դէրվիշի ասածը, հրամայեց շուտով ձի հեծնել վազել դէրվիշի ետևից և հարցնել իր կողմից թէ այդ „դրամատը“ ինչպէս պիտի շինել։

Ալլէն ձի հեծաւ, վազեց դէրվիշի ետևից, հասաւ նրան մի գիւղում և յայտնեց նրան Աբդիւլ ազայի հրամանը։

Դէրվիշը ժպտեց, ձեռքն առաւ իր վիշտ գաւազանը, կանգնեց լալէի առաջ և երգեց.

Որդի, անհաց սեղան չէս տեսել։

Կանանց, մարդկանց, մանկան արցունքը չէս տեսել . . . Երգեց, յետոյ մի խոր ակնարկ ձգեց ծերունու վրայ և հեռացաւ։ Ծառան այդ խօսքերը մնաց պահեց, արշաւանօք եկաւ իր տիրոջ մօտ և լսածը պատմեց Նրան։

Աբդիւլը նախ զարմացաւ, իսկ յետոյ ծիծաղեց.

—Խենթ է այդ դերվիշը, ասաց Նա—իսկ ես արդէն մոռացել էի թէ այդ դրամատը ինչպէս պիտի շինել։

Եւ Նա ձեռնարկեց դրամատ շինելու.

Քանդել տւաւ բոլոր գիւղացոց տները, դուրս արաւ նրանց

---

1 Դատաիարակ.

Երանց չլալ-լալասի հետ, Թողեց Երանց բաց օդում, ուր մեռնել սկսեցին, Լալեց Երանց հոգերը, իսկ Երանց՝ մարակների տակ առնելով՝ բերաւ և Ձրնապէս աշխատեցնել սկսեց մի մեծ և չքեղ պարտէզ շինելու, ուր Նա մտադիր էր դրախտի նման գեղեցկացնելու . . .

Շինեց Նրա մէջ պալատներ, շադրաւաններ, ծառուղիներ. տնկեց հազւագիւտ բոյսեր, տնկեց անմահական անուշահոտ ծաղկանոցներ... և ժողովուրդը լցած այդ չքեղ պարտիզի շուրջը՝ մեռնում էր և գոչում.

— Հաց հաց . . .

Անցան ամիսներ, դրախտն սկսում էր վերջանալ, ժողովրդի կէսը կոտորւել էր, իսկ կէսի ձայնը կտրւել „հաց" գոռալուց։

Վերջապէս, մի գեղեցիկ օր, Աբգիւլ աղան իր բարեկամներով և կանանցով եկաւ մտնելու պարտէզը, ուր պատրաստւած էր մի խնջոյք գինիներով և համեղ կերակուրներով։

Եկաւ Նա պարտէզի մօտ, հրամայեց մտրակելով հեռու քշել «հաց" գոռացող ամբոխին և ոտքը կոխեց իր այն պարտիզի չմաքի վրայ, որ շաղախւած էր ժողովրդի արիւնով...

Եւ հազիւ Թէ Նա կամենում էր ներս մտնել, որ յանկարծ մթնացաւ երկինքը և սկսեց սաստիկ որոտալ. երկիրը շարժւեց, մի Թանձր մշուշ խոյն ծածկեց ամէն կողմ, լսեցան որոտումները, աղաղակները և Թնդիւն...

Ամէն ինչ կառնեց մէմեանց։

Եւ երբ մշուշը ցրւեց, հողի հետ հաւասարւել էին Աբգիւլի պալատը, պարտէզը և դրախտ կոչւող այգին...

Ոչ մի հետք իսկ չէր մնացել այդ բոլոր արիւնաշաղախ պերճութիւններից...

Մի ընդարձակ քարայից դաշտ միայն գոյացել էր նրա տեղը և այդ դաշտը շրջապատել էր զարմացած ժողովուրդը։

Անհետացել էին ինքը Աբգիւլը և Նրա բոլոր հարեմը, ծառաները, համհարզը և իր բոլոր բարեկամները . . .

Այսպէս պատժեց Նազդանը [1] Աբդիւլլին. իսկ ժողովուրդը վարեց այն հողը, ցորեն ցանեց, անոր չինեց և սկսեց խաղաղութեամբ բնակիլ այնտեղ։

Եւ երբ անցան օրեր, նոյն դէսպուինը եկաւ անցնելու այդ կողմերէն։ Երբ ամեն լնչ տեսաւ, ծիծաղեց և ասաց.—Աբդիւլը դրախտ չինելու փոխարէն մի դժոխք չինեց, որի կրակի մէջ այրեց ինքը. իսկ երբ մեռաւ՝ այն ժամանակ միայն գոյացաւ դրախտը . . .

Տաշեց մի տախտակ, անկեց մի սիւն, տախտակը դամեց նրա վրայ և գրեց այնտեղ

Դրախտը ոչ թէ Աբդիւլը չինեց,
Որ ժողովրդին կոտորեց,
Այլ նրան Նազդանը չինեց,
Որ ժողովրդին Աբդիւլից ազատեց . . .

Վ. ՓԱՓԱԶԱՆԻ

---

1 Կրակապաշտների բարւոյ Ահուրմազդ.

I R Wehle 86

Գ Ն Տ Ա Կ

Քի՛չ էլ լացիր, գետակ վճիտ, կարկաչիւն,
Անկեանք ձմրան ցուրտ կապանքը կրելով.
Քի՛չ էլ սպա... եւ ուր որ է վառ գարուն
Քեզ կը ժպտայ՝ քո լաց-սուգին վերջ տալով:

Նւ ազատուած սառոյէ ծանրը կապանքից,
Նորից, գետակ, կը թռչկոտես համարձակ,
Նւ կարկաչող՝ ազատ ելած քո կրծքից,
Խոր անտառում՝ կը տայ քաղցր արձագանգ:

Քեզ վերեւից կը փայփայէ ժպտալով
Գարնան անուշ, պարզ երկինքը կապուտակ,
Եւ դիլթական, հրթռալուրիչ գոյներով
Քո ջրերում՝ կը շողշողայ արեգակ:

Նւ վաղորդեան հով զեփիւռը գարնային
Մեղմ՝ կը յուզէ մաքուր կուրծքդ կուսական.
Դալար ափիդ, պարզ ժպիտը երեսին՝
Քեզ ամօթխած կը ողջունէ հեզ շուշան:

Քի՛չ էլ լացիր, գետակ վճիտ, կարկաչիւն,
Դաժան ձըմրան ցուրտ կապանքը կրելով.
Քի՛չ էլ, քի՛չ էլ... եւ ուր որ է՝ վառ գարուն
Քեզ կը ժպտայ՝ քո լաց-սուգին վերջ տալով. .

Մօսկուա Աղ. Ծատուրեանց

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

(ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ)

—

Ականաւոր թիւը—եր, ներ.

Այսում ենք ծառ, և ծառը. ծառի, և՝ ծառերի. ծառին, և՝ ծառերին. ծառից և՝ ծառերից. ծառով, և՝ ծառերով. ծառում, և՝ ծառերում: Այսպէս էլ՝ քար—քարեր. հող—հողեր, ջուր—ջրեր, տուն—տներ, մազ—մազեր, ձեռք—ձեռքեր, կառք—կառքեր: Այն բառերը որոնց վրայ աւելանում է *ը*, միաւանկ են լինում, ինչպէս ծառ, հող, քար, ջուր, մազ, դեղ, կառք, աչք, ոտք, ունք, հայ, թռչուն, քուրդ, միս, գիրք, երգ . . .

Այն բառերն էս միավանկ են համարւում, որոնց վերջաւորութիւնը լինում է *ը* կամ *ըն, ըր, ըղ.* ինչպէս ձուկն, ակն, եզն, դուռն, նուռն, կուռն, սունկն, հարսն խուրձն, մատն, գառն, փուռն, լեառն, մուկն, ղունդն (եղունդն). մեղր, փոքր, սանր կամ սանդր, ծանր կամ ծանդր, ուստր (տղայ զաւակ), դուստր (աղջիկ զաւակ), ոսկր, կարծր, թանձր, նոսր, մանր կամ մանդր, կուպր, արկղ, աստղ, անգղ, կոճղ և ուրիշ սրանց նման վերջաւորութիւն ունեցող բառեր: Աստղեր, արկղեր, դստրեր, անգղեր, սանդրեր և ոչ աստղներ, արկղներ, կուպրներ, սանդրներ. եթէ լինին այդպէս աստաճ կամ դրստճ, սխալ է: Այսպէս էլ ասում ենք դռներ, կռներ, մկներ, ակներ, ձկներ, և ոչ՝ դուռեր, կուռեր: Այստեսակ բառերի վրայ չի աւելանում *ներ*, այլ միայն *եր*, ինչպէս՝ ակն—ակն-եր, եզն, եզն-եր, դուստր-եր, սանդր-եր, և այլն:

Այս կանոնը միավանկ բառերի վրայ տարածւում է նաև այն ժամանակ, երբ նոյն միավանկ բառերը իրանց *անփոփոխ նշանակութեամբ* աւելացած են լինում ուրիշ բառերի վրայ։ Օրինակ՝ ասում ենք *հայր—հայրեր, կընքահայր—եր, սանամայր—եր, գիւղատեղ—եր, լեռնադաշտ—եր, քարաժայռ—եր, ձեռնափայտ եր, մեղրահաց—եր, գլխատուռ—եր, կառատապ-եր, հացաքոյս—եր, հօրաքոյր—եր, գանձատուփ—եր*։

Իսկ եթէ բառը բազմավանկ է, այսինքն մէկ վանկից աւելի, և վերջին վանկը նշանակող բառ չէ, կամ *փոխաւած է նշանակութիւնը*, նրա վրայ աւելանում է *ներ* և ոչ *եր*։ Օրինակ՝ ասում ենք *քոյրերի*, և ոչ *քոյրներ. բայց* ասում ենք *եղբայրները*, և ոչ՝ *եղբայր—եր*, որովհետև *քոյր*՝ միավանկ է, իսկ *եղբայր*՝ բազմավանկ։ Ասում ենք *փայտեր, բայց գերաններ, տախտակներ, կարասներ, կճուճներ, պարտէզներ, մարաքներ, դարբասներ, կտուրներ, կտորներ, կարպետներ, քանոններ, գաւազաններ, սեղաններ, դպրոցներ, աշակերտներ, վարժապետներ, ուսուցիչներ, գրիչներ, մատեաններ, և այլն*։

Հետևեալ բառերը—*գիր, գործ, սէր*—միավանկ բառեր են և դառնում են *գրեր, գործեր, սէր*։ Եթէ դրանք բառերի վերջումն աւելանալով իրանց նշանակութիւնը փոխած չըլինին, *գարձեալ եր* կընդունեն, *ինչպէս՝ երկաթագիր՝ երկաթագրեր, արձանագիր՝ արձանագրեր, նօտրագիր՝ նօտրագրեր, ուր գիր* բառը նշանակում է *գիր* և ոչ ուրիշ բան, բայց կարող է պատահել, որ բառի վերջումն եղած *գիր* բառը չընշանակէ *գիր, այլ գրող*։ Օրինակ՝ ասում ենք—*գրագիր, յօդւածագիր, մատենագիր*, որոնցում *գիր* բառը նշանակում է *գրող*, և ոչ՝ *գիր*.—*գրագիր՝ գիր գրող, յօդւածագիր՝ յօդւած գրող, մատենագիր՝ մատեան գրող*։ Եւ որովհետև *գիր* բառն այստեղ *այլ* ևս *գիր* չի նշանակում, *այլ*

գրող, այս պատճառով էլ չի ասւում գրագրեր, այլ գրբագիրներ, յօդւածագիրներ, մատենագիրներ։ Կարող ենք ասել և՝ *մատենագրեր*, բայց այդ կընշանակէ մատենագրքեր, և ոչ՝ մատեան գրողներ։ Այս պատճառով սխալմամբ են ասում և գրում լրագիրները, ամսագիրները, գրբատուններ, պէտք է ասել և գրել լրագրեր, ամսագրեր, երբ թերթերի մասին է խօսքը, և ոչ նրանց գրողների —խմբագիրների, իսկ *տուններ* բառ չկայ հայերէն, այլ միայն *տներ*։

Այսպէս էլ *գործ* բառն առանձին առած իր նշանակութիւնն ունի, բայց երբ ասում ենք—*երկրագործ*, *երկաթագործ*, *արծաթագործ*, *ատաղձագործ*,—սրանցում *գործ* բառը կարող է եւ գործ նշանակել եւ գործող։ Երբ որ ասում ենք *երկաթագործ*, այստեղ կարող է նշանակել դարբին, *երկաթ գործող*, կարող է նշանակել և *երկաթից շինած*։ Ինչպէս օրինակ՝ *ձեռագործ* չի նշանակում ձեռք գործող, այլ ձեռքով շինած, ձեռքով գործած մի բան։ Երբ *երկրագործ*, կամ *հողագործ* ասելով ուզում ենք ասած լինել երկիր գործող, գիւղացի, մշակ, պէտք է ասենք *նոր*—*երկրագործներ*, *հողագործներ*, այսպէս և *երկաթագործներ*, *մսագործներ*։ Իսկ եթէ ուզում ենք ասել *երկաթագործ դռներ*, *արծաթագործ շինւածներ*, այդ ժամանակ աւելի լաւ է *ոչ նոր* աւելացնել և *ոչ նոր*։

Այսպէս փոխում է իր նշանակութիւնը և *սէր* բառը, երբ աւելանում է բառերի վրայ, և նշանակում է *ոչ թէ սէր*, այլ *սիրող*, ինչպէս գիրը դառնում է գրող, և գործը՝ գործող։ Օրինակ *աստւածասէր*,—Աստծուն սիրող, *ընկերասէր*, *եղբայրասէր*, *ծնողասէր*, *հայրենասէր*, *աղգասէր*, *որդեսէր*, *հոգեսէր*, *տիրասէր*, *բարեսէր*, *մարդասէր*. ինչպէս ասում ենք *բարեգործ*, *չարագործ*, *եղեռնագործ*, այսինքն՝ *բարի գործող*, *չար գործող*, *եղեռն կամ ոճիր գործող* . . . Այսպեսակ բառերը նոյն

միտքն ունին, ինչպես այն բառերը, որոնց վերջումն աւելանում են ալտ, վար, ալան, սպան, վան կամ ւան. կերտ, շէն, և ուրիշ այսպեսակ բառեր և մասնիկներ, և սրանք չեն ընդունում, իրանց վերջում եր, այլ ներ, ինչպես զօրապետներ, զօրավարներ, ուղտապաններ, դրունապաններ, գիւղապետներ, ձեռակերտներ, մարդասպաններ, տնտուչեններ, օթեւաններ, կարաւաններ, իջևաններ . . .

Բայց քանի տարբերութիւն ունին միմեանցից մատիտ և մատիտներ, գիւղ, և՝ գիւղեր բառերը:—Պարզ է, որ գիւղ ասելով՝ մէկ հատ գիւղ ենք հասկանում, իսկ գիւղեր ասելով՝ շատ գիւղ: Ուրեմն բառերի վրայ աւելացնելով եր կամ ներ; շատացնում ենք նրանց թիւը անորոշ կերպով: Երբ որ ասում ենք տներ, մենք չենք կարող իմանալ, թէ որքան տուն, այլ գիտենք միայն, որ տունը մէկ հատ չէ, այլ մէկից աւելի,—երկու, երեք, տասը, հարիւր, հազար ու էլ աւելի: Եթէ բառի վերջումն աւելացած է եր կամ ներ և շատացրած նրա թիւը, նոյն բառի այդ ձևը ասւում է յոգնակի, որ նշանակում է շատ. իսկ եթէ ոչ՝ եզակի՝ այսինքն՝ միակի, մէկ հատ: Այսպէս՝ տուն՝ եզակի է, իսկ տներ՝ յոգնակի. տախտակ՝ եզակի է, տախտակներ, տախտակների, տախտակներից, տախտակներով, և ուրիշ այսպիսի ձևերում—յոգնակի.

Կըպատահի, որ բառի վերջումը չըլինի եր կամ ներ, բայց նա լինի յոգնակի և ոչ թէ եզակի: Ուրեմն միշտ չէպէտք է վերջաւորութեանը նայենք, այլ մտքին: Օրինակ՝ ասում ենք եկեղեցի, և եկեղեցիք: Այստեղ եկեղեցիք մէկ հատ եկեղեցի չի նշանակում, այլ շատ եկեղեցի, ուրեմն եզակի չէ, այլ յոգնակի: Օրինակի համար ահա այսպիսի բառեր. ձրան, լրան, ձիան կամ ձիանք, եղբարտինք, ընկերտինք, ուստէք, բօշէք, տղէք, աղջկէք,

կնանիք, մարդիկ, տղամարդիկ, երեխեք, մենք, դուք, նրանք, մեզ, ձեզ, նրանց, ամենքը, մերոնք, ձերոնք, խնամիք, խնամոնք, աներանք, աներանց, Վարդանանք, Իրիցանք, Ղարաբաղցիք, Երևանցիք, շուշեցոց, բագուցիք:

Այս օրիրակներից երևում է, որ բացի *ներ* և *ներ* մասնիկներից կան և ուրիշ մասնիկներ, որոնք բառի վերջից աւելանալով, այսինքն եզակի թիւ վրայ՝ շինում են յոգնակի: Այդ մասնիկների մէջ գլխաւորն է *ք* տառը, որ գրոց լեզուամը մեր այժմեան *ներ* և *ներ* մասնիկների տեղն է բռնել.

Գրաբառում բառի վերջաւորութիւնը նշանակութիւն ունի. եթէ՝ օրինակ՝ փոփոխական բառի վերջումն է *ք* կամ *ս*,—համարւում է յոգնակի, թէկուզ մէկ հատ լինի. իսկ աշխարհիկ լեզուամն այդպէս բան չըկայ, վերջաւորութիւնը նշանակութիւն չունի, այլ միայն միտքը: Եթէ բառը մէկ հատ է նշանակում, նա համարւում է եզակի, թէկուզ վերջումը լինի *ս* կամ *ք*: Այսպէս գրաբառումն յոգնակի են համարւում և անեզակի հետևեալ բառերը—Մասիս, Տփխիս, Սգուլիս, Կարս, Բօլնիս, Դումանիս, կառք, ընթրիք, Աւետիք, ուտիս, պաս կամ պահք, աչք, ոտք, և ուրիշ շատ բառեր, բայց աշխարհիկ լեզում այդպէս բան չըկայ: Տփխիսը մէկ հատ քաղաք է, Մասիսը մէկ հատ սար, Աւետիքը մէկ հատ մարդ, կառք մէկ հատին ենք ասում, աչք նոյնպէս մէկ հատին, և այս պատճառով էլ մենք ասում ենք ոտք, ոտքեր, աչքեր, կառքեր, ընթրիքներ, ուտիաներ, պասեր, թամքեր, թուրքեր, գրքեր, ձեռքեր...

Բայց կան բառեր, որ թէ գրոց և թէ աշխարհիկ լեզուում յոգնակի միտք ունին, ինչպէս Սիւնիք, Գուգարք, Տայք, Հայք, Ռշտունիք, Սղանք, Սլանք. այս պատճառով էլ չենք ասում Սլանքներ, Սլանքների, այլ՝ Սլանք, Սլանաց, Սղանք, Սղանից աշխարհ, Տայոց լեռներ և այլն:

Գ. ԱՂԱՑԵԱՆՑ



ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳ

Քնի՛, քնի, սիրուն քալէս,
Օրօրոցըդ կօրօրեմ ես.
Շըրը՛կակ, շըրը՛կակ, կերթայ կրգայ,
Մենակ դարդիս դարման չըկայ:

Էս սարերի լալէն դու ես,
Իմ սիրունիկ քալէն դու ես:

Քնի, քնի, մութ գիշեր ա,
Երկինքն ամպել սեւացել ա,
Ձրագ չըկայ տանը վառեմ—
Քնի քալէս, օրօր կասեմ:

Դեանքիս լիսը մենակ դու ես,
Իմ անուշիկ քալէն դու ես:

Օրօրոցիդ չիւկոցի հետ
Միտս են գալիս ցաւերս մէկ մէկ.
Մեր լաւ օրերն անցան շուտով,
Կեանքս մնաշուեց միտք անելով:

Ինձ մնացած գանձը դու ես
Իմ անմահան քալէն դու ես:

Ձահէլ Ջիւան հէրդդ մեռաւ,
Մեր արեւն էլ հետը տարաւ,
Անձէն, անիսօս, հալուեց-մաշուեց,
Ինձ քալիս հետ անտէր թողուեց:
Սեւ օրերիս զարդդ դու ես
Իմ արտի մենծ դարդդ դու ես:
Հանդերն անջուր, տաւարն անխոտ,
Մանգաղ, զուլման, լուխ ու ժանգոտ,
Ալիր հըկայ քեզ, հաց թխեմ՞—
Իմ քալիկին օրօր կասեմ:
Զոր ունենու ճուղդը դու ես:
Ինձ լիս տուղ շողդը դու ես:
Քամին փչեց սարի գլխից,
Անձրեւ մտաւ ամպի ոշից,
Տան կտուրդը կաթեց կաթ-կաթ,
Իմ արցունքդը աչքից հատ-հատ:
Էս քանդուած տան սիւնդ դու ես,
Շատ ցաւերիս գինդ դու ես:
Շուտ մենծացիր, իմ աչքի լիս,
Մի ճար արա էս դարդերիս,
Շատ գիշերներդ կըլիսացնեմ՞—
Շըրթ՛իկ, շըրթիկ, քեզ կօրօրեմ:
Օրօր, օրօր, պուճուր քալիս,
Դժար օրնը հատան գլխիս—
Կարմիր օրեր մի հատ քալիս . . .

Երեւանի Պաշտան

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

Առաջ. Աղջամ՝ Ցէր-Խաչատուրեանի

Ամբողջն մի շնորհալի գեղեցիկ բառ,
Երեք վանկանի, բոլորը ուղիղ տառ։
Առաջին վանկն է մի անձնաւորութիւն,
Որ Յաբէթեան ցեղին տուաւ ազատութիւն,
Որի երկիրը իրան սերնդով
Ամբողջ է ցայժմ նրա անունով
Եթէ այս վանկի վերջաւորութիւնից
Անջատենք մի տառ իր ընկերներից,
Կըստանանք սերունդ նոյն անձնաւորութեան,
Որ բարբարոսների հալածանքներից
Ննջարկուած է շատ գաղթականութեան։
Երկրորդ վանկն է մի տառ ձայնաւոր,
Ձայնաւորաց մէջ սկզբնաւոր.
Իսկ երրորդն է պատուղ մեր երկրում,
Որ տարածուած է Արաքսի հովտում։
„Բ“-ը և ‹Գ›-ը վանկերը առնենք,
Հայ օրիորդի անուն կրկազմենք.
Իսկ եթէ ‹Գ›-ը վանկի սկզբի տառի
Յետևում դնենք „յ“ բաղաձայնը
Եւ կրկին երկրորդ վանկի հետ յօդենք,
Յայնժամ կըստանանք Պարսից այն բանտը,
Ուր Արշակ Բ. արքայն կնքեց իր կեանքը։

Ռ Ե Բ Ո Ւ Ս

Առաջ. Գ. քահ. Մկրտումեանի

ՀԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ ՆԱԽԸՆԹԱՑ№ի

Հանելուկ—Լուծեց Յովսէփ ԵԳԱՆԵԱՆՑ աշ. Ն. Ա. Հ. Դ. II.դաս.

Վարդավառ

Խնդիրը՝ Լուծեցին շատերը. ալահանջած բառերն են՝	
Անուն պաշտպանելու գործիք	Վահան,
Թշնամու յաղթանկիզը	Ոսկի
Մի քաղաք Թիւրքահայաստանում	Վան
Կաթնեղէնի ամենաընտիրը	Սեր
Ազգանուն	Հայ
Ամեն ամօթ արիւնակցութիւն	Եղբայր
Բրիստոսի քարոզած մեծ խօսքը	Բարի
Կատու ժողովրդական բառով	Տանիք
Էական բայ, առաջին դէմք, անցեալ կէս	

Այս բառերը լրանց վերաբերեալ Թուանշանների համեմատ տառերը զետեղելով սիւնակներում, ստացւում է հետևեալը՝

Խ. Աբովեան, վերջ Հալաստանի, ողբ հայրենասիրի

				Խ						
				Ո	Գ	Բ				
			Վ	Է	Ր	Փ				
		Ա	Բ	Ո	Վ	Ե	Ա	Ն		
	Հ	Ա	Յ	Ա	Ս	Տ	Ա	Ն	Ի	
Հ	Ա	Յ	Ր	Ե	Ն	Ա	Ս	Ի	Ր	Ի

ԱՂԲԻՒՐԻ ՀԵՌԱԳԻՐԸ

13 դեկտեմբերի, Ս՛օսկռա.

Հայ պիտնականներէ Նահապետ, նշանաւոր հայագէտ, Լազարեան Ճեմարանի նախկին սրօֆէսօր, ուուս և օտար պիտնական շատ ընկերութիւններէ պատուաւոր անդամ

Մ Կ Ր Տ Ի Չ Է Մ Ի Ն Ը

վախճանեցաւ: Մեծ է կորուստը: Լազարեան Ճեմարանը, պիտնական ընկերութիւնները, հայ գաղթականութիւնը սգակիցներ են պատրաստում Հանգուցեալի դագաղի վրայ դնելու:

ԽՍԱՒՆ ՂՈՒՐԲԻ

Այս ըսպէիս Մօսկուայից ալբոֆէխսօր Խալաթեանից հեռագիր սատացանք, որ հաղորդում է մեր նշանաւոր հայագէտ Մկրտիչ Էմինի մահուան բօթը։ „Ազբուբի“ և Տարագի կողմից հեռագրեցինք պ. Խալաթեանին մեր խորին ցաւակցութեան թարգման հանդիսանալ։

—

Ներկայ №ի հետ տարեվերջ բոլոր բաժանորդներին ուղարկուում է „Ազբուբի“ ներկայ թուականի Դ. ընծան՝ պատկ տախտակ—օրացոյց։

*

Ներկայ №-ում տպուած Ռուսաստոյի նամակի հետ սատացանք և մի նամակ պ. Ադամեանից, որ շատ սրատաճմլիկ կերպով է նկարագրում իր հիւանդութիւնը և նեղ դրութիւնը։

—

Ադամեանի տագանդը յարգող Թիֆլիսի երևոյթասիրութիւնը պատրաստուում է նրա օգտին շռայլ քաղաքային թատրոնում մի երաժշտական-գրական երեկոյթ տալ փրանսիական խմբի մասնակցութեամբ։

—

Անցեալ նոյեմբերի 25-ին խմբագրութեան գրասենեակում վիճակ գցուեց մեր բաժանորդների մէջ „Ազբուբի“ 90 թ. երկրորդ ընծաները։ Վիճակն ընկաւ՝ 1. Թիֆլիսում Մողնու եկեղեցու սարկաւագ Թադէոս Վերդեանին գլուխ 50ը.։ 2. Երևգորուալօլիս պ. Նիկողայոս Ղազարեանին՝ դրասեղանի դարդ 50ը.։ 3. Դանձակ. պ. Յարութիւն Սահակեանին 10 ր. գրքեր։ 4. Ախալքալաք, քաղաք. ուս. աղ. Սեդրակ Օհանջանեանին մի գրաւիւր Մովսէս մարջարէի տասը պատգամ տառնալը։ 5. Նոր Նախիջևան պ. Մարտիրոս Խ. Բօզդիկեանցին մի գրաւիւր՝ Յովսէփ Դեղեցկի վաճառումը։ 6. Երևգորուալօլիս պ. Երևգոր Խ. Ոսկանեանին 15 րուբլու գրքեր։ 7 Աստրախան պ. Յարութիւն Թ. Զաքարեանին մի գրաւիւր՝ Յիսուս Միսա լերան վրայ ատօթելիս և 8 Նիկատերինոդար պ. Միքայէլ Ց. Ղարասուլեանին 25 ր. գրքեր։ Հրաւիրում ենք յիշեալ պարոններին անօրինել այդ երեդէնները խմբագրութեան գրասենեակից ստանալու համար։ Գրքերն են՝ Մեր առաջնակարգ հեղինակները՝ հանգուցեալ Րաֆֆիի, Մերենցի պ. պ. Աղայեանցի, Պռօշեանցի հեղինակութիւնները, մեր և Մոսկուայի ու Պետերբուրգի ուսանողների հրատարակութիւնները։ Գրաւիւրները բոլորն էլ պատրաստուած են Փարիզ, իսկ գրասեղանի գարդերն են դեղեցիկ երեդէնները, որ նոյնպէս գնուած են Փարիզում։

—

Թիֆլիսի Հայերէն Գրքերի Հրատարակութեան Ընկերութեան վարչութիւնը պատուոնական նամակներով դիմել է այդ ընկերութեան նախկին տարբեր անդամներին խնդրելով, որ նրանք նորոգեն և այս՝ համարեա թէ անցած, 90 թ. անդամակցութիւնը։ Վարչութեան այս տեսակ սրտնեղութիւնը աչքի առաջ խոստովանութիւն է, որ այդ ընկերութիւնը, չնորհիւ իր անցեալ ապատգիւն գործունէութեան արդէն արժանացել է հայերի հաւատքութեանը։ Արդեօք յար-

մաբ չէք լինել այդ ընկերութիւնը վաճել և գոյքը յանձնել Կովկասեան Հայոց կամ մի այլ Բարեգ. Ընկ. պայմանաւորելով որ ամեն տարի նրանք տպագրեն ընթերցանութեան համար յարմար գրքեր, կամ թէ մըցանակները նշանակեն յայտնի գրւածներ համար, խրախուսելով մեր հեղինակները։

—

Մի խումբ հաճախողները հրատարակութեամբ լոյս տեսան պ. Դ. Աղայեանցի բանաստեղծութիւնները։

—

Շնորհակալութեամբ սաացել ենք պ. Շաւարշ «Պատկերները կեանքից. Նիկ. Աբբահամեանից Աբբեցող և տաք սէր. Խալաթեանից Մովսէս Խորենացու Հայոց պատմութեան քննադատութիւնը. Մըխիթարեան ուխտից, Ագգաբանու. Թիւնը ազնըւական գարմին Տիւզեանց, Ուռուսճեանցութիւնք Լեհահայոց դատաստանագրոյն, գործնական քերականութիւն գերմաներէն լեզուի Վարդանեանից՝ Սմայլս ինքնօգնութիւն. Թումանեան՝ Բանաստեղծութիւնները. Հայոց Հրատ, ընկերը, Ժամանակագրութիւնն Հայոց Դարդէլի։

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

ԲԱԳՈՒ Լ. Ա. Ասացէք խնդրեմ, ովք է մուրալով ձեռք բերել անկախութիւն եւ բարօրութիւն, որ այժմ փորձից յետոյ աշխարհքիս չորս կողմում արձագանք եղած եւ բոլորին էլ պատկերացած աշխարհ փաստը կարելի լինի այսօր հերքելե և ապացուցանել, որ մուրացկանը կարող է անճաղոհ, անվեհեր լինել։ Դուք զարմանում էք, որ այդ մեծ մասամ տակ անկիւններում մուրում են։

ԲԱԳՈՒՆ. Հայերին Ձեր. Եթէ յարմար կըլինի՝ կըտպագրենք, իսկ եթէ ոչ՝ կըոչնչացնենք. Մանաւոր նամակով եւ կանխաւ տպագրութիւն չունինք պատասխանելու փոքրիկ գրւածների համար, թէեւ պատասխանի համար մարկա էլ ուղարկի։

ՂՂՂԴԻՆԱՆՑԱՍ. Ուսուց. Բ. Մեզ տպագրած չունինք, բայց նորը կազմւում է, կըտպագրւի յունւարից յետոյ, դեռ կարգի էլ չէ քերւած, որ արտագրել տայինք, մանաւանդ չենք իմանում ինչ հասակի համար էք կամենում եւ ինչ գումարի.

ՂՈՒԲԱ. Հոգ. Ուս. Հոգաբ. Ձեր նամակն ստացանք. շատ ցաւում ենք, որ Դուբայի պէս հայաբնակ քաղաքի ուսուցիչարանը այնքան ընկած եւ տմանկ է համարում իրան, որ վստահանում է մուրացկանութեան դիմել հայ թերթեր ստանալու համար։ Ձեր խնդիրը չենք կատարի.

ՍՈՒԽՈՒՄ. Ս. Ֆ. Թշւառ է այն ազգը, որ չըգիտէ գաղափարի ծառայել։ Շատ ափսոսում ենք։ Բայց ինչ կարող ենք անել։ Դուք մեղաւոր չէք։ Շնորհակալ կըլինէինք, եթէ մեր ուղարկածները մեզ վերադարձնէիք։ Ուրեմն ուրախ կըլինէինք, եթէ հնարաւոր լինէր Ձեզ էլ մասն եւ բաժին ուղարկելու այն մեծ նիւթական, բարոյական եւ փիզիքական վարձատրութիւնից, որ տարիների ընթացքում առատ ստանում ենք.

ԱՍՏՐԱԽԱՆ. Մի խումբ Տիկնանց, Շատ շնորհակալ ենք։ Մենք դեռ արժանի չենք եւ մեր մատուցած ծառայութիւնը դեռ շատ փոքր ենք համարում մենք ինքներս. Աստած տայ, որ մենք կարող լինինք մեր անկեղծ համակրողների աջակցութեամբ իրագործել այն նախագիծը, որ օր ու գիշեր մեզ մտատանջում է։

ԼՕՍԴՕՆ Հին կոր. Ցոյս ունինք, հրապիտի խնայէք մեզ Ձեր շարունակ աջակցութիւնը, Խնդրում ենք հրատարակիք, արէք ինչ որ վայել է եւ յարմար.

ԲԱԳՈՒՆ Գ, Թ, Ստացանք, շատ զեղեցիկ է, բայց շատ փոքր լինելուն համար անյարմար է տպագրութեան.

ԺՐՆԵՒ Ուսանողներին. Ինչ կարիք կար յիշեցնելու,

Խմբ.-հրատ. Տ. Նազարեան

Дозволено цензурою, Тифлисъ, 1890 г. 13-го декабря.

Типографія „Ароръ“ Т. Я. Назарьянъ, угол. Головин. про. Барят. ул

Լոյս տեսան եւ վաճառւում են՝

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Գինն է 1 ր. 50 կ.

Դիմել Աղբիւրի խմբագրութեան։

Ց. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Գինն է 35 կոպեկ, ճանապ. 45 կ.

Դիմել Հեղինակին այս հասցէով՝

Тифлисъ, Норашенская ул. д. бывш. Пугинова.

Տ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

Հայ ժողովրդական հէքիաթներ

Ջ. Գ Ի Ր Ք

Գինն է 50 կոպեկ

Շուտով մամուլի տակ կը մտնէ մեր ժողովածուի ութերորդ գիրքը։

Խնդրում ենք հայ ուսուցիչներին և առ հասարակ ձեռնհաս անձանց նպաստել մեր ձեռնարկութեանը, ուղարկելով հետեւեալ նիւթերը.—հէքիաթներ, ժողովրդակ. երգեր, չան-գիւղումներ, առածներ, հանելուկներ, սրագաղտնաւորութիւններ, անեծքներ, օրհնութիւններ, երդումներ, վիպաքշական խոսքեր. մանկական խաղեր, ժողովրդական բառեր, ոճեր, դարձուածներ և այլն։

Ամեն տեսակ աւանդութիւն սկզբում է գրել բուն տեղական բարբառով, կցելով նրան ժողովրդական բառերի բացատրութիւնները։ Հաւանական նիւթ ուղարկողը կը ստանայ մեր հրատարակած գիրքերից մի մի օրինակ։

Մեր հասցէն՝

Тифлисъ

Т. Навасардянъ

Тип. М. Ротинянцъ

ՅԱԿ. ՂԱՋԱՐԵԱՆՑ

Գ Ի Ւ Ղ

Մի արկած քիւրդերի կեանքից

Գինն է 15 կոպ.

Դիմել Աղբիւրի խմբագրութեան

ՏԱՆԴԻԷՍ

Պիտոյան եւ այտումնկան

Լոյս է տեսնում տարէկնը երկու գիրք, իւրաքանչիւրը առանձին 2 ր.

Աշխէն մամուլի տակ է և օրերս լոյս կըտեսնի Դ. գիրքը։

Դ. և Դ. գրքերը միասին 3 ր.

Յանկացողները դիմում են հետեւեալ հասցէով՝

Москва, Газетный пер. д. Ліанозова, Типографія М. Бархударьянъ

Հրատարակիչ Մ. Բարխուդարեան.

Լոյս են տեսել

Օրացոյցներ 1891 թուականի

	Ր.	Կ.
1. Ծոցի	—	5
2. Նոյնը ընտիր թղթի վրայ		20
3. Գրպանի պատկերազարդ		15
4. Նոյնը ընտիր թղթի վրայ		50
5 Մեծադիր պատկերազարդ սեղանի, լուսատաւ, շատ կարևոր տեղեկութիւններով		30
6 Նոյնը ընտիր թղթի վրայ	1	—
7 Կանանց համար յատկապէս, կարևոր յաւելուածներով։ Կանանց Ընկերութեան կանոնադրութիւններով	—	40
8 Նոյնը ընտիր թղթի վրայ	1	—
9 Պատկ—Հատուածական		50
10 Պատկ—տախտակ օրացոյց		

Աղբիւրի եւ Տարազի բաժանորդները ճանապարհածախս չեն վճարում։

ԲԱՑԻԱԾ Է 1891 ԹՒԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՏԱՐԱԶ

Ապրիլի յունիսյան

Գեղարուեստական—գրական-երգիծաբանական

Պատկերազարդ շաբաթաթերթի

Պատկերազարդ „ՏԱՐԱԶ“ շաբաթաթերթը հասցրած կըլինի նկարների կողմից մայրաքաղաքներում հրատարակուող շաբաթաթերթի ծոխութեանը: Բովանդակութեան կողմից պատկերազարդ ՏԱՐԱԶ շաբաթաթերթը նոյնպէս ծոխ կըլինի եւ բազմակողմանի: Վիպական մասը, որ պատկերազարդ ՏԱՐԱԶ շաբաթաթերթում նկարների հետաքրքիր առաջին տեղը կըբռնէ, կըպատրաստի մի շարք պատմական եւ ժամանակակից վէպեր, հանդուցեալ ՐԱՖՖԻի, նրա թողած թղթերից, պ.պ. Աղայեանցի, Պռօշեանի, Լէօի, եւուրիշների:

Պատկերազարդ ՏԱՐԱԶ շաբաթաթերթը լոյս կըտեսնի ամեն կիրակի օր այժմեան ՏԱՐԱԶ ամսաթերթի դիրքով իրաքանչիւր հատւածը երկու թերթից:

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՏԱՐԱԶ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ՆՊԱՏԱԿԸ

Հայ անդաստանում՝ ցանել գեղեցկի եւ բարւոյ սերմեր ու արմատախիլ անել տգեղ եւ չար որոմ:

ԴԵՂԱՐՈՒԵՍՏԸ լինի նա արտայայտուած քանաստեղծի վառ շրթունքով, հրաշագործ նկարչի վրձինով, թէ ներա տրոփացնող վիպագրի գրչով՝ Տարազում առաջին տեղը պիտի բռնէ: Քննադատութիւն մեր առօրեայ կեանքի՝ լինի նա արտայայտուած վէպով, պատմածով, Փելիետոնով, թէ կատակով Տարազի գրական մասը պիտի կազմէ:

Կանանց խնդիրը; լուսաւորեալ եւ մեր աշխարհի կնոջ վիճակը, որ ութիւնը սրդի ընդհանուր գրականութեան մէջ տիրապետող այդ խնդրի վերաբերեալ վիճաբանութիւնների հետեւանքը պարբերաբար կարձանագրուի Տարազում:

Տարազի մի երրորդական մասը կըկազմեն պատկերներ, նկարներ, տեսարանները, թէ արդի եւ թէ անցած գնացած, գլխաւորապէս մեր կեանքի: Հայ կինը ամեն շաբաթ Տարազում կըգտնէ եւրոպական նորագոյն կարուածքի, ծեռագործի վերաբերեալ նկարներ բացատրութիւններով:

ՏԱՐԱԶԻ ԾՐԱԳԻՐԸ

Գեղարուեստ եւ գիտութիւն. Պատմական եւ ժամանակակից վէպեր, պատկերներ, թատրոնական գրուածներ: Բանաստեղծութիւն: Քննադատութիւն եւ կենսագրութիւն: Կար, ձեւ, ծեռագործ եւ ամեն նորութիւն արհեստների վերաբերեալ: Տնային արդիւնաբերութիւն եւ տնտեսութիւն: Ճանապարհորդութիւն եւ արկածք: Երաժշտութիւն եւ թատրոն: Ժամանակագրական լուրեր, տեղեկութիւններ, յօդուածներ եւ այլն: Փելիետոն, ծաղր, առած, կատակ: Շախմատի եւ այլ խաղեր, ռեբուս, հարցեր, խորհուրդներ: Այլեւայլք, պատասխաններ, յայտարարութիւններ:

ՏԱՐԱԶ պատկերազարդ շաբաթաթերթի տարեկան բաժանորդագինը 6 րուբլի է, արտասահմանի համար 7 րուբլի (20 ֆր.)

Հասցէն՝ Тифлисъ. ред.-изд. ежеред. журн. Таразъ или Tiflis, (Caucase) Rèdaction du journal illustré TARAZ.

Խմբ. Հրատ. Տիգրան Նազարեան

ԲԱՑՒԱԾ Է 1891 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ա. Իշխանեան Տարազ 1890 թ. № 9

ԱՂԲԻՒՐ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ես մտածող սերունդի մէջ ցանկ ազնիւ մարդ լինելու սիրեմ, զարթնեցնել և զարգացնել նրանց մէջ բարի, առաքինի ձգտումներ, արմատախիլ անել չար և վնասակար սրտմտութիւն,—ահա «Աղբիւրի» նպատակը։

Ջարգացնել հայ երեխայի մէջ սէր դէպի իր շրջապատողները, բարի նեղանձն զգալ ամէն մարդ, ամբիծ և առաքինի դէպի ամէն մարդ մօտաւորն ու հարեւան,—ահա «Աղբիւրի» ձգտումները։

«Աղբիւրի» սիւները հասած են ժողովրդական հեքիաթներից, զրոյցներից, խաղերից, առածներից, որոնք առաջ մեր մարդ և քաղցրիկ բնիկերգուների հարին ազատ պարարտ հող պիտի պատրաստեն սրտերում սէրմեր առնելու մարդկութեան և հայրենիքի բարօրութեան համար։

Աղբիւրը կը հրատարակի 1891 թ. նոյն ուղղութեամբ և նոյն աշխատակիցների մասնակցութեամբ։ Ամանձին ներամբ պատրաստ պատկերազարդ ամսագրի նպատակը կը լինի նոյնպէս մանկական հոգեկան յարմար ընթերցանութիւն տալ և միևնոյն ժամանակ ընտրել նիւթեր ու նրանց բազմազանութեան մէջ ոչ մի կողմից չվնասել մանկան հոգեկան զարգացման ընթացքին։ Աղբիւր ամսագրի 1891 թ. համար ստացել է Ս. Էջմիածնի Տ. Տ. Մակարի Կաթողիկոսի օրհնութիւնը։

Աղբիւրի 1891 թ. առաջին պրկ չորս համարները կը պարունակեն 64 երեսանոց պատկերազարդ ընթերցանութիւն։ Ամսագրի տարեկան բաժանորդագինը 2 ռուբլի է։ Ամսագրի խմբագրութիւնը կը գտնուի Թիֆլիսում, Ս. Էջմիածնի տպարանի մօտ։



IX տարի IX

Աղբիւրի Ա. պրկ 1892 թ. համար գեղեցիկ նկարների №-ի հետ կը զարդարի մի պատկառազեստ և մի գրական փայլուն օրագրիր։

Աղբիւրի առաջիկայ 1891 թ. ամառուան ընթացքում պրկների Բաքւում Թիֆլիսում, բաժանորդ գրողը հնարն կը տեսնայ, իսկ միւս քաղաքներում չորեքշաբթի գրատները կարգով։ Բայց ոչ մի գէպքում ուշ քան Ա. Համարի յոլ տեսնելը, իսկ մինչև Նոյեմբերի 15-ը բաժանորդ գրողը կտանայ գեղեցիկ պրկների մէկից առաջ։

Բացի այդ պրկիմներից, տարեայ ընթացքում առաջարկում են Տանկրաններ և ձեռնարկներ։ Մեր բաժանորդից գին վճարողները առանձ են մրցանակներ։ Յունուարի Ը-ում տրուած ձեռնարկ առաջին վճարող կստանայ 100 օրինակ մանկական ընթերցանութեան համար գրքեր։

Փետրարի Հանդերձի առաջին վճարող՝ տիկին Մարգարիտ Ալեքսանեանի գրչակից ալբումից մի շքեղ կազմած օրինակ։

Մարտի ձերձում վճարող՝ Յեսուի յարեմեանը, մի շքեղ և ձեռագիր գրատեր։

Յունիսին՝ 10,000 հատ փոսոյ մարկա գանազան ձեռնարկներ (երեք տարի է առաջարկում է այս մրցանակը և մինչև տակ ոչ ոք դեռ չըստացած)։

Ձեռագործների Հանդերձի վճարող տ. տ. Ագոպեանցի և Պօղոսեանցի տրուած բոլոր աշխատութիւններից մեծ օրինակ։

Նոյեմբերի ձերձում վճարող 1892 թ. Համար 10 օրինակ Աղբիւր և Տարազ։

Տարազ և Աղբիւր պարբերաբար կրտպագրին հանգուցեալ **ՐԱՖՖԻ**ի բոլոր թանգագին ձեռագրերը, ինչպես և այժմ տպագրում է նրա „Մինը այսպես միւսը այնպես“ թիֆ. վաճառ. կեանքից։ *Տարազի և Աղբիւրի* աշխատակցում են պ. պ. Գ. Սպեղեան, Պ. Պռօշեան, Ա.ռ Եգիկեան (Ա. Մ. Ե. Պ.), Լ.էօ (հեղ անուն), Վ. Փափազեանց, Յ. Յովհաննիսեան, Բարկաս (հեղ անուն), Եղ. Մազմանեան, Ա.պրօ (հեղ անուն), Ռ. Թադէոսեանց, Սահրատ (հեղ անուն), Զ. Բալուեան, Զարուհի (հեղ անուն), Բժ. Ի. Ագռաւարեանց, Սիփուիլ (հեղ անուն), Հ. Առաքելեան, Մ. Պատմունի (հեղ անուն), Բժ. Թ. Զաքարեանց, Բագրատիս (հեղ անուն), Ագ. Բալանեան, Ս. Հախումեան, Ագ. Թաւուեան, Օր. Սիրա (հեղ անուն), Յակ. Դադարեան, Եր. Պալեան, Ագ. Սարգսեան, Մ. Հախումեանց, Ագ. Կրասիրիկեան, և ուրիշներ։

Օրիորդը պատմա դէպի թեյասէղ Թաշունը, տանում Ну-ка, цопка, слажи дур-рак։
Թոքերի Մինը պատկ միաց պատկ- վէպը Հերֆերի վաճառակ. կեանքից։ Տարազ 1890թ. № 2։

ՊԵՂԱՐԻԵԱՐԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ-ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ

Առաջիկայ 1891 թ. յունուարի 1-ից կըհրատարակուի շաբաթը մի անգամ

Պատկերազարդ ճարտ շաբաթաթերթի Նպատակը

Հայ անդաստանում ցանել գեղեցիկ և բարով սերմ ազգասիրութեան, ազնիւ զգացմունքների և ճշմարիտ գաղափարների, որոնք կարող են ծաղկեցնել հայ ժողովրդի բարոյական կեանքը, զարգացնել նրա մէջ գեղեցիկ ճաշակ և ազնիւ հոգեբանական զգացմունքներ։

Ահա այն նպատակները, որոնց հետամուտ կը լինի մեր հանդէսը։

Մենք համոզուած ենք, որ մեր ազգասէր հասարակութիւնը մեր ձեռնարկը կը ընդունի սիրով և կը գնահատի մեր ջանքերը։

Մենք կը ձգտենք, որ մեր հանդէսը ամէն շաբաթ կանոնաւոր կերպով դուրս գայ, որ նրա մէջ տեղ գտնեն ամէն տեսակ հետաքրքրական նիւթեր, որոնք կարող են հետաքրքրել ամէն տեսակ ընթերցողներին։

Մենք կը ձգտենք, որ մեր հանդէսը ամէն տեսակ ընթերցողների ձեռքում հաւասար հետաքրքրութիւն առաջացնէ

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՄԱՅԻՍԵՆ ԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐԵՆ ԱՄԻՍԸ

ՀՅՈՒՍԻՍ

ԱՐՎԵՍՏԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ

«ԱՐԱՐԱՏ» ԵՒ «ՍՈՒՐԱՍ»

ՊԱՏԱՍԽԱՆԱՏԻՐՈՋ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ

ՊՐՈՖ. ՄԱՆՈՒԿ ԱԲԵԼՅԱՆԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՐՎԵՍՏԱՅԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԻ

«ԱՐԱՐԱՏ» ԵՒ «ՍՈՒՐԱՍ»

ՊԱՏԱՍԽԱՆԱՏԻՐՈՋ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ

ՊՐՈՖ. ՄԱՆՈՒԿ ԱԲԵԼՅԱՆԻ

Տարեկան բաժանորդագինը՝ Թիֆլիսում և գաւառներում փոստով կամ տեղափոխութեամբ 3 ռուբ. արտասահման 5 ռուբ. Առանձին համարը 10 կոպ. Հին տարեկանները 20 կոպ. Ամսագիրը լոյս է տալիս տասն օրը մի անգամ։ Ամսագրի խմբագրութիւնը գտնւում է Թիֆլիս, Ալեքսանդրովսկի պողոտայ, № 1։

Ընդունւում են բաժանորդագրութիւններ և յայտարարութիւններ։ Գինը յայտարարութեանց համար՝ տողը 10 կոպ. Ամսագրի խմբագրութիւնը բաց է ամեն օր, բացի տօնական օրերից, առաւօտեան 9 ժամից մինչև երեկոյեան 3 ժամը։

Ամսագրի խմբագիր-հրատարակիչ՝ Մանուկ Աբելեան։

Տպարան Ա. Մարտիրոսեանցի։ Թիֆլիս, Ալեքսանդրովսկի պողոտայ, № 1։

1890

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№		Եր.
1.	Աշխարհ 84 թ.	3 —
2.	« 85 թ.	3 —
3.	« 86 թ.	3 —
4.	« 87 թ.	10 —
5.	« 88 թ.	10 —
6.	« 89 թ.	3 —
7.	« 89 թ.	3 —
8.	« 89 թ.	4 —
9.	« 89 թ.	3 —
10.	« 89 թ.	10 —
11.	« 89 թ.	10 —
12.	« 89 թ.	10 —
13.	« 89 թ.	10 —
14.	Ալ. Ծատուրեան	10 —
15.	Ալիքսանդր Մեծ	10 —
16.	Ալիքսանդր Մեծի հանդիպումը Դանդամիսի հետ	10 —
17.	Գողգոթայի տեղը	20 —
18.	Գրիգոր Նարեկացի	10 —
19.	Դաւիթ Բեկ	5 —
20.	Դարձեալ տարի մը	12 —
21.	Դպրոցական պարապմունքներ	20 —
22.	Եկեղեցական երգեր	10 —
23.	Ը. Դարու Հայ Բանաստեղծ	10 —
24.	Թուր Մեծի Ե.	40 —
25.	Թուրքական Հայրենասէրներ	10 —
26.	Ի. Ե. Ն. Ի. Ա. Ա.	12 —
27.	Ի. Ե. Ն. Ի. Ա. Ա.	12 —
28.	Ի. Ե. Ն. Ի. Ա. Ա.	12 —